

**ՌՈՒՉԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ**

Գավառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական փաստաբանների քեկնաժու, դոցենտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳՈՒՄ**

Սահմանադրական պատասխանատվությունն իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, որի կիրառման կառուցակարգում անփոխարինելի դերակատարություն ունի սահմանադրական արդարադատության մարմինը: Սահմանադրական արդարադատությունը հետխորհրդային տարածքում ձևավորված նորանկախ պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բնութագրի անօտարելի մասն է կազմում: ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածն ամրագրում է, որ «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը»: Այսպիսով, պետության Հիմնական օրենքը նախատեսում է սահմանադրական դատարանի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ սահմանադրական արդարադատության իրականացման առումով: Հատկանշական է, որ սահմանադրական դատարանը (այսուհետ՝ ՄԳ) մի կողմից սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ է և ինքն է կրում պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ մյուս կողմից՝ սահմանադրական պատասխանատվության ատյան է՝ Հանրապետության Նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ Նախագահի քեկնաժուների, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորության քեկնաժուների, կուսակցությունների համար: ՄԳ-ի բնութագրման համար ելակետային է այն, որ վերջինս սահմանադրական արդարադատության միջոցով իրականացնում է սահմանադրական վերահսկողություն՝ որպես պետաիշխանական գործունեության ինքնուրույն ուղղություն: Գ. Գ. Հարությունյանի բանաձևմամբ՝ «Սահմանադրական վերահսկողությունը հասարակության կենսագոյի համընդհանուր ճանաչում գտած ու հաստա-

տագրված կանոնների պահպանության երաշխիքն է»<sup>2</sup>: Ժողովրդավարական պետության սահմանադրական արժեքների պաշտպանական համակարգի առանցքը սահմանադրական վերահսկողության և արդարադատության հետ միասին կազմում է վերջիններիս հետ օրգանապես փոխկապված սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը, որը խիստ կարևորվում է երկրում սահմանադրականության ռեժիմի հաստատման առումով:

Սահմանադրականությունը՝ որպես Սահմանադրության և ընդհանրապես սահմանադրական իրավունքի գործնական իրացում, ներառում է սահմանադրական դատարանի գործունեությունը<sup>3</sup>: Եվ որպեսզի ՄԳ-ը դառնա սահմանադրականության հաստատման համար անհրաժեշտ ինստիտուտ և կարողանա իր գործունեությամբ նպաստել երկրում սահմանադրականության միջավայրի ստեղծմանը, պետք է կրի լուրջ սահմանադրական պատասխանատվություն: Սահմանադրական պատասխանատվության կիրառման համար անհրաժեշտ սահմանադրական իրավախախտման փաստը կարող է արձանագրել ՄԳ-ը: Եթե սահմանադրական իրավախախտմամբ պատճառվում է վնաս, ապա սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը ներառում է նաև պատճառահետևանքային կապը սուբյեկտի վարքագծի ու հետևանքի՝ պատճառված վնասի միջև: Բարդություններ են առաջանում այն դեպքում, երբ պետք է ապացուցել սահմանադրական նորմի խախտման հետևանքով վնասի պատճառումը: Սահմանադրական պատասխանատվության դատավարական ձևի շրջանակում բարդ է ապացույցների հավաքումը, ստուգումը, վերլուծությունը և գնահատումը: Նման իրավիճակից ելք գտնելու համար շատ կրկրներում ստեղծել են հատուկ մարմիններ, որոնք քննում են սահմանադրական իրավախախտումների հետ կապ-

ված գործերը: Այդ մարմիններն ունեն ապացույցների հավաքման և գնահատման համար անհրաժեշտ իրավասություններ. օրինակ՝ իրավունք ունեն ստուգելու փաստաթղթեր, միջնորդություններ, ծառայողական գրություններ, կանչերու վկաներին, պետական մարմիններից պահանջելու անհրաժեշտ նյութեր, տեղեկանքներ, բացատրություններ: Լեհաստանում այդպիսի մարմին է Պետական Տրիբունալը, որն էական նշանակություն ունի սահմանադրաիրավական սանկցիաների կիրառման մեխանիզմում: Իսկ մեր երկրում նման իրավունքներով օժտված է ՄԳ-ը: Հայաստանի Հանրապետությունում ՄԳ-ը սահմանադրական իրավահարաբերությունների կարևոր սուբյեկտներից է, պետական իշխանության մարմինների նկատմամբ սահմանադրական պատասխանատվության միջոցներ կիրառող կամ այդ միջոցների կիրառման ընթացակարգում հանգուցային դեր ունեցող ինստիտուտ, սահմանադրական վերահսկողություն իրականացնող, ինչպես նաև սահմանադրական պատասխանատվություն կրող մարմին: Այսինքն՝ ՄԳ-ը իր սահմանադրաիրավական կարգավիճակով՝

- 1) սահմանադրական պատասխանատվություն կիրառող ատյան է,
- 2) պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն կրող մարմին,
- 3) պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման գործընթացում Լական դեր ունեցող ինստիտուտ.

4) համապատասխան հիմքերի առկայության դեպքում ՄԳ-ի անդամների նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության կիրառմանը նպաստող մարմին:

Հայաստանի Հանրապետությունում ՄԳ-ի սահմանադրական պատասխանատվության նորմատիվ հիմքերն են Սահմանադրությունը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է ՄԳ-ի լիազորությունները և դրանով իսկ անուղղակիորեն սահմանում ՄԳ-ի պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը թե՛ հիմնական և թե՛ լրացուցիչ լիազորությունների իրականացման համար:

Օրենքում (67-րդ հոդված) որպես նորոյթ նախատեսված է, որ ՄԳ-ը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հաղորդում է հրապարակում իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ:

Այն ուղարկում է պետական ու տեղական ինքնակառավարման համապատասխան մարմիններ, ինչը, կարծում ենք, միտված է վերջիններիս պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության բարձրացմանը, սահմանադրական արդարադատության արդյունավետության ու հրապարակայնության ապահովմանը: Օրենքով հստակեցվել է ՄԳ-ի գործունեության կարգը, նախատեսվել են տարբեր գործերի քննության դատավարական առանձնահատկությունները, ամրագրվել է գործի հանգամանքների ի պաշտոնն պարզման սկզբունքը, կողմերի համար ապահովվել է սահմանադրական իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության երաշխիք, մատչելի է դարձել սահմանադրական արդարադատությունը:

Հատկանշական է, որ ՄԳ-ի որոշումները պարտադիր են պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Բոլոր իրավագոր սուբյեկտների կողմից ՄԳ-ի որոշումների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ են լուրջ նախադրյալներ, կենսագործման մեխանիզմներ: Սակայն իրականությունն այն է, որ հաճախ բազմաթիվ պահանջներ, անգամ օրենսդրական նորմեր մնում են անկատար՝ իրականացման նորմատիվ, ֆինանսական, կազմակերպական և այլ հիմքերի բացակայության կամ անբավարարության պատճառով: Մասնավորապես, Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

«3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետները խախտելու դեպքում սահմանադրական դատարանն այդ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ կարող է նշանակել օրենքով սահմանված պատասխանատվության միջոց :

Պատասխանատվության միջոցի նշանակումը չի ազատում սահմանադրական դատարանի պահանջների կատարումից:

Սույն մասում նշված գործողությունների կամ անգործության համար ֆիզիկական անձինք կամ իրավաբանական անձի դեկավարը կարող են տուգանվել՝ օրենքով սահմանված չափով:

**4. Պատասխանատվության միջոց նշա-**

նակվելուց հետո սահմանադրական դատարանի պահանջները վերստին չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ դրանց կատարումից խուսափելը կամ կատարման ժամկետները խախտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն»:

Համաձայն ենք ՄԳ-ի տարեկան հաղորդման մեջ տեղ գտած այն մտահոգության հետ, որ սույն հոդվածի պահանջները ձեռնարկում են կրում, որովհետև Օրենքում նշված պատասխանատվության միջոցները դեռևս սահմանված չեն: Կամ՝ Օրենքի 66-րդ հոդվածը նախատեսում է ՄԳ-ի որոշումը չկատարելու հետևանքները՝ սահմանելով, որ «Սահմանադրական դատարանի որոշումը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարմանն արգելք հանդիսանալն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն»: Այս նորմը նույնպես դեկլարատիվ բնույթ է կրում, քանի որ նյութական և դատավարական իրավունքի նորմերով որոշակիացված չէ: Նշված ձևակերպումները ենթադրում են լրացումներ ու փոփոխություններ Հայաստանի Հանրապետության քրեական, վարչական իրավաստումների վերաբերյալ օրենսգրքերում, այլ նորմատիվ իրավական ակտերում: Այսուհանդերձ, ՄԳ-ը կարևոր դերակատարություն ունի սահմանադրական պատասխանատվության կիրառման կառուցակարգում: Ընդ որում, մի կողմից ՄԳ-ը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվության կոդեքսի սուբյեկտ է, մյուս կողմից՝ ՄԳ-ի յուրաքանչյուր անդամ նշանակման պահից կրում է անհատական պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն, իսկ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում կարող է վերածվել նեգատիվ սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի:

Օրենքի 3-րդ հոդվածը բովանդակում է ՄԳ-ի անդամին ներկայացվող պահանջները և, բացի տարխարային, քաղաքացիության, կրթական, լեզվական և այլ ցենզերից, 2-րդ մասում նախատեսում է, որ «Սահմանադրական դատարանի անդամ նշանակելիս Ազգային ժողովը և Հանրապետության Նախագահը պետք է հաշվի առնեն նաև սահմանադրական դատարանի անդամի քննաժողովի քարոշական հատկանիշները»: Օրենքի այս իմպերատիվ պահանջը պայմանավորված է ՄԳ-ի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակով, նրա կարևոր առաքելությամբ:

ՀՀ ՄԳ-ի անդամը ենթակա է նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝

գործունեության անհամատեղելիության մասին Սահմանադրության և օրենքի պահանջները խախտելու համար, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքներից, որը չպետք է խոչընդոտի ՄԳ-ի անդամի լիազորությունների իրականացմանը և չի կարող հարգելի պատճառ համարվել ՄԳ-ի նիստերից բացակայելու համար:

Սահմանադրական նշված դրույթները խախտելու դեպքում ՄԳ-ի անդամը կվերածվի սահմանադրական իրավաստման սուբյեկտի և սահմանված կարգով կենթարկվի նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝ պաշտոնազրկման ձևով: Իսկ ՄԳ-ի անդամն իր սահմանադրաիրավական կարգավիճակից բխող պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը ստանձնում է պաշտոնի հետ մեկտեղ՝ Ազգային ժողովի նիստում Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև տրված ելույթում՝ ապահովել Սահմանադրության գերակայությունը, լինել անուշառ, հավատարիմ մնալ ՄԳ-ի անդամի կոչմանը (Օրենքի 4-րդ հոդված):

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ի անդամն անփոփոխելի է, սակայն դա չի նշանակում, որ «անպատասխանատու» է: ՄԳ-ի անդամը պատասխանատվություն է կրում մի կողմից իրեն նշանակող մարմնի, մյուս կողմից՝ ՄԳ-ի առջև՝ Սահմանադրության և օրենքների պահպանման, իր լիազորությունների պատշաճ կատարման համար: Այսինքն՝ ՄԳ-ի անդամի նկատմամբ սահմանադրական պատասխանատվության առյուծ կնիքն է նրան նշանակող մարմինները՝ Հանրապետության Նախագահը կամ Ազգային ժողովը: Իսկ ՄԳ-ը մասնակցում է իր անդամին նեգատիվ սահմանադրական և այլ իրավաբանական (վարչական կամ քրեական) պատասխանատվության ենթարկելու գործընթացին՝ եզրակացություն տալով՝

- նրա լիազորությունները դադարեցնելու,

- նրան կալանավորելու,

- որպես մեղադրյալ ներգրավելու,

- նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ ՄԳ-ը սահմանադրաիրավական սանկցիաներ է կիրառում իրեն ոչ ենթակա և հաշվառու՝ պետական իշխանության մարմինների նկատմամբ, ընդ որում, կիրառում է սահմանադրական պատասխանատվության ոչ բոլոր, այլ միայն իրեն

բնորոշ միջոցները: ՄԳ-ի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված ակտերը կորցնում են իրավաբանական ուժը, իսկ նախնական սահմանադրական վերահսկողության դեպքում՝ ընդհանրապես ուժի մեջ չեն մտնում, չեն կիրառվում:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է սահմանադրական պատասխանատվության միջոցներ, իսկ Օրենքն ամրագրում է սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառման մեխանիզմը: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ը՝ որպես սահմանադրական վերահսկողության մարմին, պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝

- որոշելու օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը,

- անհատապես կամ վերացած ճանաչելու Հանրապետության Նախագահի քննաժողովի համար առաջացած խոչընդոտները,

- օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնելու կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Նշված բոլոր հարցերի վերաբերյալ ՄԳ-ը ընդունում է որոշումներ, իսկ կարակացություններ տալիս է՝

- Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին,

- Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարիւնության մասին,

- ՄԳ-ի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ,

- համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի մասին:

ՄԳ-ը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում միջազգային պայմանագրերի նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողություն իրականացնելու, այսինքն՝ մինչև միջազգային պայմանագրերի վավերացումը դրանցում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար: Օրինակ ՀՀ ՄԳ-ը «2004 թ. մայիսի 13-ին Ստրասբուրգում ստորագրված

Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի վերահսկողության համակարգը փոփոխող և լրացնող թիվ 14 Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով որոշեց, որ Արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

ՄԳ-ը նաև պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ լուծելու.

- հանրաքվեների արդյունքների,

- Հանրապետության Նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների,

- պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ ՄԳ-ը գործերը քննում և դրանց վերաբերյալ որոշումներն ու եզրակացություններն ընդունում է կոլեգիալ: Եվ որպես կոլեգիալ մարմին՝ ՄԳ-ը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս պահպանելու գործի քննության Օրենքով սահմանված սկզբունքները:

Իր հերթին պետությունը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում՝ ապահովելու ՄԳ-ի բնականոն գործունեությունը հետևյալ ուղղություններով.

- ՄԳ-ի ֆինանսավորում պետական բյուջեի միջոցների հաշվին,

- չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով ՄԳ-ի պահուստային ֆոնդի նախատեսում,

- առանձին շենքի և անհրաժեշտ գույքի հատկացում,

- օրենքով սահմանված կարգով ՄԳ-ի զբաղեցրած շենքերի, շինությունների անվտանգության ապահովում,

- ՄԳ-ի անդամի, նրա բնտանիքի անդամների, նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության կամ ներգործության սպառնալիքի դեպքում ՄԳ-ի պահանջով իրավասու պետական մարմիններին պարտավորեցում՝ անհապաղ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները ՄԳ-ի անդամի, նրա ընտանքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի ու ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու

ուղղությամբ (Օրենքի 6-րդ հոդված),

- ՄԳ-ի անդամի համար կյանքի և աշխատանքի արժանավայել պայմանների, գործունեության սոցիալական երաշխիքների ապահովում (Օրենքի 12-րդ հոդված):

ՄԳ-ի նախագահը պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն է կրում դատարանի բնականոն գործունեությունն անմիջականորեն ապահովելու, ՄԳ գործունեությունը կազմակերպելու և ղեկավարելու համար:

ՄԳ-ի անդամն իրավունք չունի լինելու կուսակցության անդամ, զբաղվելու քաղաքական գործունեությամբ: Ընդհանրապես, սահմանադրական վերահսկողություն և սահմանադրական արդարադատություն իրականացնող ատյանները քաղաքական մարմին չեն և չպետք է մասնակցեն քաղաքական գործընթացներին, թեև նրանց ընդունած ակտերը հաճախ ունենում են քաղաքական հետևանքներ<sup>10</sup>:

Որպես սահմանադրական պատասխանատվություն կրող սուբյեկտ՝ ՄԳ-ի նախագահն ու անդամներն անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանն ու օրենքներին: Օրենքը նախատեսում է, որ ՄԳ-ի անդամի գործունեության կապակցությամբ նրա նկատմամբ որևէ ներգործություն անթույլատրելի է և հետապնդվում է օրենքով: Մի կողմից՝ Օրենքն ամրագրում է, որ ՄԳ-ի անդամն իրավունք չունի իր գործունեության կապակցությամբ հայցելու կամ ստանալու որևէ ցուցում, մյուս կողմից՝ սահմանում է, որ ՄԳ-ի անդամի գործունեության միջամտության կամ նրա նկատմամբ այլ ներգործության յուրաքանչյուր փաստի մասին ՄԳ-ի անդամն անհապաղ իրազեկում է ՄԳ-ին, որն իր որոշմամբ կարող է իրավասու մարմիններից պահանջել անհապաղ պատասխանատվության ենթարկել միջամտություն թույլ տված և (կամ) այն կազմակերպած անձին: Չի բացառվում, որ միջամտություն թույլ տված կամ այն կազմակերպած սուբյեկտը ենթարկվի նեգատիվ սահմանադրական պատասխանատվության:

ՄԳ-ի անդամը ոչ միայն անփոփոխելի, այլև անձեռնմխելի է: Նա չի կարող հետապնդվել ու պատասխանատվության ենթարկվել իր կարգավիճակից բխող գործողությունների համար: Անձեռնմխելիության սկզբունքի համաձայն՝ նա չի կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրա նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվելու հարց հարուցվել՝ առանց ՄԳ-ի ու նշանակող

մարմնի՝ Ազգային ժողովի կամ Հանրապետության Նախագահի համաձայնության: ՄԳ-ի համաձայնությունը արվում է եզրակացությամբ, Ազգային ժողովի համաձայնությունը՝ որոշմամբ, իսկ Հանրապետության Նախագահի համաձայնությունը՝ հրամանագրով: Նրշված ակտերի բնդունմամբ իրավասու ատյանները ՄԳ-ի անդամի նկատմամբ արդեն իսկ կիրառում են նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն՝ վերջինիս գրկելով անձեռնմխելիության իրավունքից և նրան իրավաբանական պատասխանատվության այլ տեսակների (վարչական, քրեական) ենթարկելու հնարավորություն տալով:

ՄԳ-ի անդամի լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով: Տարիքը (65 տարին, իսկ մինչև 2005 թ. սահմանադրական բարեփոխումների՝ ՄԳ-ի գործող անդամների համար՝ 70 տարին) լրանալու կամ հրաժարականի հիմքով ՄԳ-ի անդամի լիազորությունների դադարումը նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց չէ: Գտնում ենք, որ ՄԳ-ի անդամի լիազորությունների դադարեցումը կարելի է գնահատել որպես սահմանադրաիրավական սանկցիա՝ հետևյալ հիմքերով.

1) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,

2) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց պարտականությունների կատարման հետ չկապված պաշտոն զբաղեցնելը,

3) առևտրային կազմակերպություններում պաշտոն զբաղեցնելը,

4) այլ վճարովի աշխատանք կատարելը, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,

5) որևէ կուսակցության անդամ լինելը,

6) քաղաքական գործունեությամբ զբաղվելը,

7) հանցագործություն կատարելը և նրա նկատմամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը,

8) պաշտոնում օրենքի խախտմամբ նշանակվելը, ինչն ապացուցվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով,

9) ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու կամ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը,

10) մեկ տարվա ընթացքում երեք օր անհարգելի պատճառով ՄԳ-ի նիստերին չմաս-

նակցելը.

11) ՄԳ-ում քննվելիք գործի վերաբերյալ նախապես կարծիք հայտնելը կամ այլ գործողություններով իր անաչառությունը կասկածի տակ դնելը, կամ դժգոհակ խորհրդակցության ընթացքի մասին տեղեկություններ հայտնելը, կամ այլ կերպ ՄԳ-ի անդամի իր երդումը դրժելը:

ՄԳ դիմելու պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն կրում են Սահմանադրությամբ նախատեսված հետևյալ սուբյեկտները, Հանրապետության Նախագահը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ պատգամավորների առկա մեկ հինգերորդը (նախկին՝ մեկ երրորդի վոյսարեն), ՀՀ կառավարությունը, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները, մարդու իրավունքների պաշտպանը, Հանրապետության Նախագահի թեկնածուները, պատգամավորության թեկնածուները, դատարանները, գլխավոր դատախազը, յուրաքանչյուր ուր, ինչպես նաև իրավաբանական անձինք՝ Սահմանադրության 42.1-րդ հոդվածին համապատասխան:

Սահմանադրական պատասխանատվությանը (ավելի ստույգ՝ սահմանադրական պատասխանատվության շարժընթացին և սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառմանը) քննույ Նն օրենսդրությամբ սահմանված որոշակի դատավարական ձևեր: Սահմանադրական պատասխանատվության միջոցների կիրառումը իրավախախտի նկատմամբ իրականացվում է սահմանադրական-դատավարական նորմերին համապատասխան, որոշակի կարգով: Օրենքը սահմանում է ՄԳ-ում գործի քննության կարգը (դիմումի նախնական քննարկումը, գործը քննության ընդունելը, գործի քննությունը մերժելը): Որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին՝ ՄԳ-ը որոշում է վիճարկվող նորմատիվ ակտի սահմանադրականության հարցը և դիմումի ապահովման նպատակով իր որոշմամբ կարող է գործը քննության ընդունելուց հետո, դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, մինչև գործի դատաքննության ավարտը կասեցնել այն իրավական ակտի գործողությունը, որի սահմանադրականությունը վիճարկվում է, եթե կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել անդառնալի կամ ծանր հետևանքների դիմող կողմի կամ հանրության համար: Որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտ՝ Օրենքի 40-րդ հոդվածի համաձայն ՄԳ-ը իրավունք ունի պահանջներ

ներկայացնելու: Այսպես, ՄԳ-ը, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու կապակցությամբ նաև վերջինիս կողմից որպես սովորական գեկուցող նշանակված ՄԳ-ի անդամը (անդամները) ՄԳ-ի նախագահի գիտությամբ իրավասու է (են) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու փաստաթղթեր, եզրակացություններ և այլ նյութեր, հանձնարարելու կատարել ստուգումներ, փորձաքննություններ, հետազոտություններ, իսկ ֆիզիկական ու իրավաբանական անձանցից՝ պահանջելու նրանց տրամադրության տակ գտնվող նյութեր:

Նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության որոշման գործերով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվում է վիճարկվող ակտն ընդունված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը:

Գործի քննության արդյունքում ՄԳ-ը կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.

- 1) վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին,
- 2) վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին:

Վերջին որոշման ընդունման փաստը կարող ենք գնահատել որպես ՄԳ-ի կողմից ներգառիվ սահմանադրական պատասխանատվության միջոցի կիրառում ակտն ընդունված մարմնի նկատմամբ: Օրինակ՝ ՀՀ ՄԳ-ը թիվ 649 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց «Սոցիալական ապահովության բարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթները: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապատասխան՝ անվավեր ճանաչված դրույթների կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերը կամ դրանց համապատասխան դրույթները ևս կորցրին իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու, այսինքն՝ հրապարակման պահից՝:

Նորմատիվ ակտի սահմանադրականությունը գնահատելիս՝ ՄԳ-ը ոչ միայն ստուգում է դրա ընդունման ընթացակարգը, ստորագրման, հրապարակման, ուժի մեջ մտնելու կարգի տեսանկյունից, այլ, նախ, նրա բովանդակության, ինչպես նաև իշխանությունների բաժանման, իրավասության տեսանկյուն

նից, այսինքն՝ իրականացվում է սահմանադրական վերահսկողություն թե՛ ըստ բովանդակության և թե՛ ըստ ձևի:

Դրական ենք գնահատում այն փաստը, որ ՄԳ դիմող սուբյեկտների շրջանակն ընդլայնվել է, և այդպիսի իրավունք է ստացել մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում բվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով: Այդպիսով, ստեղծվել է սահմանադրական արդարադատության մարմնում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, դրանց խախտումների և հակաիրավական սահմանափակումների կանխման կարևոր երաշխիք և լուրջ քայլ է կատարվել միասնական եվրոպական իրավական տարածք ինտեգրվելու ճանապարհին<sup>1</sup>: ՄԳ դիմելու իրավունք ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով: Նրանց իրավունք է վերապահվել նախաձեռնել պետական մարմինների ընդունած ակտերը հակասահմանադրական ճանաչելու և այդպիսով պետական մարմինների նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառելու գործընթացը: Նշված գործերով դիմումները ՄԳ կարող են ներկայացվել այն պահից սկսած, երբ տեղական ինքնակառավարման մարմինը իմացել է կամ պարտավոր էր իմանալ իր իրավունքների խախտման կամ դրանց խախտման իրական հնարավորության մասին, քայց ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո:

Կարծում ենք, մեկ տարվա սահմանափակումն այդքան էլ ճիշտ չէ և տեղական ինքնակառավարման մարմինն գրկում է իր սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելու հնարավորությունից: Նույն տրամաբանությամբ ցանկացած օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ ընդունումից մեկ տարի հետո այլևս չի կարող վիճարկվել ՄԳ-ում:

Շատ հաճախ նորմատիվ իրավական ակտերի բովանդակած դրույթների հակասական, վիճելի բնույթն ի հայտ է գալիս հենց դրանց կիրառման ընթացքում, որոշակի հասարակական հարաբերություններ կարգավորելիս, կոնկրետ գործեր լուծելիս, դատարան-

ների և իրավապահ մարմինների աշխատանքում: Այս տեսանկյունից, կարծում ենք, ճիշտ էր դատարաններին և գլխավոր դատախազին ՀՀ ՄԳ դիմելու իրավունք վերապահելը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով: Այս դեպքում ՄԳ-ը իրականացնում է իրավական նորմերի կոնկրետ վերահսկողություն:

ՀՀ ՄԳ-ը կարևոր դերակատարությունն ունի Հանրապետության Նախագահի նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառելու գործընթացում: Թեև Հանրապետության Նախագահի նկատմամբ սահմանադրական պատասխանատվության առկայությունն է ՀՀ Ազգային ժողովը, սակայն օրենսդիր մարմինը չի կարող իրականացնել իր այդ լիազորությունը՝ առանց ՀՀ Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին ՄԳ-ի եզրակացության: Եթե ՄԳ-ի եզրակացությունը բացասական է, ապա հարցը հանվում է ՀՀ Ազգային ժողովի քննարկումից: Օրենքի 76-րդ հոդվածը նախատեսում է Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին ՄԳ-ի եզրակացություն կարող վերաբերյալ գործերի քննության առանձնահատկությունները: Նշված գործերով ՀՀ Ազգային ժողովն իր որոշման մեջ պետք է մատնանշի Հանրապետության Նախագահի այն որոշումը, գործողությունը կամ անգործությունը, որի ընդունումը կամ իրականացումն իր մեջ պարունակում է պետական դավաճանության կամ քրեական օրենսգրքով նախատեսված այլ ծանր հանցագործության<sup>2</sup> հատկանիշներ: Նշված գործերով ապացուցման բեռը կրում է դիմող կողմը: Սահմանադրական դատավարությանը որպես դատավարության մասնակից պետք է ներգրավվի Հանրապետության Նախագահը, որն օգտվում է դատավարության կողմի իրավունքներից և կրում նրա պարտականություններն այնքանով, որքանով դա չի կարող վնաս պատճառել իր իրավունքներին ու ազատություններին: Հանրապետության Նախագահի չներկայանալն արգելք չէ գործի դատաքննության համար: Նշված գործերի վարույթը չի կարող կարճվել Հանրապետության Նախագահի հրաժարականի կամ այլ հիմքով նրա լիազորությունների դադարեցման դեպքերում:

Հարց է ծագում՝ ինչպես կարող է ՄԳ-ը եզրակացություն տալ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, եթե ըստ ՀՀ Սահմանա-

դրության 57-րդ հոդվածի՝ այդպիսի հիմք են պետական դավաճանության կամ այլ ծանր (առանձնապես ծանր) հանցագործության կատարման փաստը: Այդ առումով Օրենքը նախատեսում է, որ գործը դատաքննության նախապատրաստելիս ՍԴ-ը կարող է ձևավորել նախաքննության մարմնի՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված հատուկ հանձնախումբ, որում ընդգրկում է վճռաբեկ դատարանի պալատներից մեկի նախագահին (որպես հանձնախմբի ղեկավար) և վճռաբեկ դատարանի երկու դատավորների: Ներկայացված ապացույցները նմանապես են հետազոտման ՍԴ-ի կողմից՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Հատուկ հանձնախմբի ձևավորումը պարտադիր է, եթե դիմող կողմը կամ Հանրապետության Նախագահը միջնորդել է դրա համար: Նշված գործերի քննության ընթացքում ՍԴ-ը կամ հատուկ հանձնախումբը, մասնավորապես, իրավասու է՝

1) դատական, դատախազական, քրեչափական, այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել նյութեր, քրեական, քաղաքացիական, վարչական գործեր, դատավճիռներ, վճիռներ, որոշումներ, փորձագիտական եզրակացություններ, տեղեկանքներ և այլ նյութեր,

2) հրավիրել և լսել այն անձանց, որոնց բացատրությունները կարող են նշանակություն ունենալ գործով կայացվելիք եզրակացության համար:

Դատական նիստի բացվելուց հետո Ազգային ժողովի ներկայացուցիչը (ներկայացուցիչները) ներկայացնում է (են) դիմողի դիրքորոշումը, որից հետո ներկայացված փաստերի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնում Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչը: Դրանից հետո կատարվում է ապացույցների հետազոտում: Նիստի վերջում եզրափակիչ խոսքով հանդես է գալիս դիմող կողմը, որը կարող է պնդել իր դիմումը կամ իրաժարվել դրանից, և Հանրապետության Նախագահը և (կամ) նրա ներկայացուցիչը, որին (որոնց) տրամադրվում է պաշտպանությանը հանդես գալու հնարավորություն: Այնուհետև ՍԴ-ը լսում է տվյալ գործով ձևավորված հանձնախմբի դիրքորոշումը: Հանրապետության Նախագահի և (կամ) նրա ներկայացուցիչն ունեն վերջին ելույթի իրավունք: Այդ ելույթից հետո ՍԴ-ը կարող է օրենքով նախատեսված կարգով որոշում կայացնել գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ, իսկ այդպիսի որոշում չկայացվելու դեպքում նիստի նախագահ

հողը հայտարարում է գործի քննության ավարտի մասին: Եթե գործի դատաքննության ժամանակ դիմող կողմը իրաժարվում է դիմումից, և Հանրապետության Նախագահը և որոշյա ժամկետում չի առարկում դրա դեմ, ապա գործի վարույթը ենթակա է կարճման: Իսկ գործի քննության արդյունքում ՍԴ-ի կարող է ընդունել հետևյալ եզրակացություններից մեկը.

1) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի բացակայության մասին (դրանով իսկ դադարեցնելով Ազգային ժողովի կողմից Հանրապետության Նախագահի նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության կիրառման գործընթացը),

2) Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին (այդպիսով՝ օրենսդիր մարմնին հնարավորություն տալով Հանրապետության Նախագահի նկատմամբ կիրառելու նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց):

Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին եզրակացության մեջ ՍԴ-ի պետք է նշի՝

1) Հանրապետության Նախագահի այն որոշումը, գործողությունները կամ անգործությունը, որոնցում առկա են ծանր (առանձնապես ծանր) հանցագործության հատկանիշներ և այդ հանցագործության ճշգրիտ որակումը,

2) Հանրապետության Նախագահի մեղավորությունը հաստատող ապացույցները և սահմանադրական դատարանի պատճառաբանված դիրքորոշումը դրանց հետազոտման վերաբերյալ:

Եզրակացությունն ընդունվելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ օրը, այն ուղարկվում է Ազգային ժողով և հայտարարվում հանրային հեռուստատեսությամբ:

Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին եզրակացություն ստանալու համար ՍԴ-ին դիմում է կառավարությունը՝ Հանրապետության Նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին տեղեկություններին իրագրել դառնալուց ոչ ուշ, քան 5 օր հետո:

Կարծում ենք, որ այս հարցով ՍԴ դիմելու իրավունք պետք է ունենա ոչ թե ՀՀ կառավարությունը, այլ պետական իշխանության բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ ՀՀ Ազգային ժողովը:

ՍԴ-ը լուրջ դերակատարություն ունի

նաև համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու գործընթացում, քանի որ եզրակացություն է տալիս վերջինիս պաշտոնանկության հիմքերի մասին: Համայնքի ղեկավարի նկատմամբ սահմանադրական պատասխանատվության առյան և ՀՀ կառավարությունը, որը 2005 թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո կարող է պաշտոնանկության ձևով նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն միջոց կիրառել միայն ՄԳ-ի եզրակացության հիման վրա: Այսպիսով, ստեղծվել է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի սահմանադրական պաշտպանության լուրջ երաշխիք:

ՄԳ-ը կուսակցությունների նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվություն կիրառող առյանն է: Կուսակցությունների գործունեության արգելման հարցով Հանրապետության Նախագահը դիմում է ՄԳ: Կուսակցությունների այն անդամները, ովքեր Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, ենթակա են նեգատիվ սահմանադրական պատասխանատվության՝ իրենց ծառայողական (պաշտոնական) դիրքը հոգուտ կուսակցական շահերի օգտագործելու դեպքում: ՄԳ-ը կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին որոշում կարող է ընդունել նրա գործունեության մեջ Սահմանադրության կամ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման հատկանիշներ բացահայտելու դեպքում: Այն կուսակցությունը, որի գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ դիմում է ներկայացվել, սահմանադրական դատավարությունում ներգրավվում է որպես դատավարության մասնակից և օգտվում է դատավարության կողմի իրավունքներից ու կրում նրա պարտականությունները: Գործի քննության արդյունքում ՄԳ-ը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) դիմումը մերժելու մասին.

2) կուսակցության գործունեությունը որոշակի ժամկետով կասեցնելու մասին, և կարող է այդ ժամկետում կուսակցության վրա դնել կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները վերացնելու պարտականություններ.

3) կուսակցության գործունեությունն արգելելու, այսինքն՝ կուսակցության նկատմամբ նեգատիվ սահմանադրական պատասխանատվության միջոց կիրառելու մասին:

ՄԳ-ը նորմատիվ իրավական ակտերի

նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնելիս կամ կուսակցության գործունեությունը կասեցնելու, կամ արգելելու մասին որոշում կայացնելիս հանդես է գալիս որպես սահմանադրական պատասխանատվության առյան, իսկ ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության (որպես սահմանադրական պատասխանատվության առյանների) կողմից Հանրապետության Նախագահի, համայնքի ղեկավարի (որպես սահմանադրական պատասխանատվության սուբյեկտների) նկատմամբ սահմանադրաիրավական սանկցիաներ կիրառելու մեխանիզմում ունենում է վճռական դերակատարություն՝ տալով եզրակացություն:

Կարևոր նշանակություն ունեն նաև ՄԳ-ի որոշումները՝ Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհարաբարեկի կամ վերացած ճանաչելու մասին: Մի դեպքում ՄԳ-ը կարող է անձին զրկել պետության գլխի թեկնածուի կարգավիճակից՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով, իսկ խոչընդոտները վերացած ճանաչելու դեպքում տալ հնարավորություն՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով իրականացնելու իր պահիվ ընտրական իրավունքը: ՀՀ Սահմանադրությանը նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության որոշման և հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման համար ՄԳ-ը դիմելու իրավունք ունի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը: Ինչպես նշում է Հ.Հ. Հակոբյանը, «Միանգամայն ընդունելի է այն, որ այժմ պատգամավորների մեկ հինգերորդը կարող է դիմել սահմանադրական դատարան»<sup>15</sup>: Այս կերպ ապահովվում է պաշտպանական փոքրամասնության իրավունքը, և ընդլիմությունը ևս իրավունք է ստանում դիմելու սահմանադրական արդարադատության առյան:

Վ. Մ. Սիրիխն առաջարկում է սահմանադրական դատարանին օժտել պետական իշխանության վերադաս դաշնային մարմինների կամ Պետական Դոմայի որոշմամբ՝ պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության ենթարկելու իրավունքով: Ընդ որում, պատասխանատվության հիմք կարող է լինել ոչ միայն հանցագործության կատարման փաստը, այլև պաշտոնատար անձի ցանկացած նահանջը ՌԴ Սահմանադրության, դաշնային օրենքների պահանջներից կամ վերադաս դաշնային մարմինների որոշումներից<sup>15</sup>: Իսկ Ն. Բ. Ակուևի կարծիքով, անհրաժեշտ է սահմանադրական դատարանին վե-

րապահել իրավունք՝ պառլամենտի առջև բարձրացնելու նախարարների և այլ պաշտոնատար անձանց պատասխանատվության հարցը՝ վերջիններիս կողմից սահմանադրական օրենսդրության խախտման փաստերի հիման վրա<sup>16</sup>։ Սակայն գտնում ենք, որ հակառակը պետք է լինի՝ պառլամենտը, կառավարությունը կամ այլ իրավասու մարմին ՄԳ-ի առջև պետք է բարձրացնի պաշտոնատար անձի արարքի կամ ընդունած որոշման սահմանադրականության հարցը և սահմանադրական արդարադատության մարմնի «վերդիկտի» համաձայն՝ պետք է լուծվի տվյալ սուբյեկտին նեգատիվ սահմանադրական և այլ իրավաբանական պատասխանատվության ենթարկելու խնդիրը։

Հատկանշական է, որ աշխարհում առաջինը հիմնադրվել է Ավստրիայի Սահմա-

նադրական դատարանը, որի հայեցակարգը մշակել են Հ. Կելզենը և Կ. Էյզենմանը։ Եվ հետաքրքիրն այն է, որ համաձայն 1920 թ. ընդունված Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի՝ «Սահմանադրական դատարանը քննում է գործեր այն մեղադրանքների հետ կապված, որոնք հանգեցնում են Գաշնության և Հողերի գերագույն մարմինների սահմանադրական պատասխանատվությանը՝ վերջիններիս կողմից իրենց պաշտոնական գործունեության ընթացքում թույլ տված իրավախախտումների համար»<sup>17</sup>։

Այսպիսով, սահմանադրական դատարանը անփոխարինելի դերակատարություն ունի սահմանադրական պատասխանատվության՝ որպես սահմանադրական իրավակարգի ու օրինականության ապահովման անհրաժեշտ գործիքի կիրառման կառուցակարգում։

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Конституционное правосудие в странах СНГ и Балтии. Отв. ред. М. А. Митюков. М., 1998; Schwartz H. The struggle for Constitutional Justice in Post-Communist Europe. Chicago and London, 2000; Harutunian G. G. La Court Constitutionnelle D' Armenie. Les Cahiers du Conseil Constitutionnel. N 20. 2006 (89-91). Paris.

<sup>2</sup> Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2004: Նույնի՝ Սահմանադրականության գաղափարի արդի միտումները և ժամանակի մարտահրավերները // ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, Հ. 2, 2004: Арутюнян Г. Г. Конституционное правосудие - отражение сути правового государства и конституционализма // Конституционное правосудие. Вестник конференции органов конституционного контроля стран молодого демократии. Ереван, 2005, вып 2(28): Հակոբյան Ռ. Խ. Նկատառումներ «Սահմանադրականության» և «Սահմանադրական պատասխանատվություն» հասկացությունների վերաբերյալ // Օրենք և իրականություն, Երևան, 2009, N 4, 6, էջ 1-4, 12-13:

<sup>3</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Арутюнян Г. Г. Конституционный суд в системе государственной власти (сравнительный анализ). Ереван, 1999: Նույնի՝ Սահմանադրական արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2000: Նույնի՝ Սահմանադրական արդարադատության ներկա վիճակը և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում (համառոտ անդրադարձ, 30.01.2001 թ.), Երևան, 2001: Նույնի՝ Գաղափարական իշխանություն, Համակարգային գործակալության կրթական գարգացումների փորձից, Երևան, 2002 և այլն:

<sup>4</sup> Սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս Հակոբյան Ռ. Խ. Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, Երևան, Իրավունք, 2008, 516 էջ:

<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2006/32 (487), 21.06.06:

<sup>6</sup> Այս և հուշորդ ընդգծումները մերն են՝ Ռ. Խ. Հակոբյանի:

<sup>7</sup> Տե՛ս Հարությունյան «Սահմանադրական դատարանի 2006 թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ», Հունվար 2007թ., Երևան, էջ 19-20:

<sup>8</sup> Տե՛ս ՄԳՈ-509 որոշում, 17.09.2004թ.// www.concourt.am:

<sup>9</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Navot S. Political Questions in the Court: Is §Judicial self-restraint a better alternative than a §non justiciables approach, Himsworth Ch. Judicial Review of Political questions. Questions of Justiciability // VII World Congress of the International Association of Constitutional Law, Athens, 11-15 June 2007.

<sup>10</sup> Տե՛ս Քաղաքացի Մ. Քոչարյանի և քաղաքացի Հ. Գավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով՝ ՄԳՈ-649 որոշում, 4.10.2006 թ., էջ 17-18:

<sup>11</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Арутюнян Г. Г. Роль конституционных судов в формировании единого правового пространства Европы (доклад на Московском международном форуме: «Единое правовое пространство Европы и практика конституционного правосудия», 26-28 октября 2006 г.) // Право и политика: научный юридический журнал. М., 2006, N 12, С. 5-10: Նույնի՝ Հայաստանը Եվրոպական միասնական իրավական համակարգում // Օրենք և իրականություն, N 2, Երևան, 2007, էջ 1-5:

<sup>12</sup> Անիրաճեշտ է նախատեսել նույն ատանձնապես ծանր հանցագործությունները:

<sup>13</sup> Տե՛ս Հակոբյան Հ. Հ. Փառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 595:

<sup>14</sup> Տե՛ս Ս. Ի. Проблемы правовой ответственности государства, его органов и служащих: Материалы круглого стола. Белгород, 2000. С. 26.

<sup>15</sup> Տե՛ս Проблемы конституционно-правовой ответственности (по материалам конференции) // Вестник Московского университета, Серия II, Право, 2001, N 3, С. 126.

<sup>16</sup> Տե՛ս Маклаков В. В. Конституционный контроль и конституционная юстиция // Конституционное право зарубежных стран. М., 1995; Ю.ши Ю.А. Модели конституционного правосудия // Сравнительное конституционное право. Отв. ред. В. Г. Чиркин. М., 1996.

**ՔՐԻՍՏԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

ՀՀ «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի և Հայ-Ուսական (Սլավոնական) համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու



**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՈՒՄ**

Իրավաբանական գիտության մեջ քրեական քաղաքականության հիմնախնդիրները դեռևս վաղ ժամանակներից բավականին մեծ ուշադրության են արժանացել: Նշված հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի գործնական կարևոր նշանակություն: Այն նպաստում է հանցավորության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցների ու եղանակների, ինչպես նաև օպտիմալ ուղղությունների մշակմանը:

Իրավաբանական գրականության մեջ առկա են քրեական քաղաքականության մի շարք սահմանումներ<sup>1</sup>, որոնց հիման վրա այն կարելի է բնորոշել որպես հանցավորության դեմ պայքարին ուղղված պետական քաղաքականություն, որի հիմնական նպատակն է քրեախրավական, քրեադատավարական, քրեակատարողական, քրեաբանական և քրեախրավական միջոցների ու մեթոդների կիրառման եղանակով հանցավորության մակարդակի առավել հնարավոր նվազեցումը:

Ներկայումս ՀՀ քրեական քաղաքականությունը հիմնվում է հանցավորության դեմ պայքարին ուղղված միջազգային իրավական ակտերի դրույթների, ՀՀ Սահմանադրության, օրենքների, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի և ազգային անվտանգության ապահովման հարցերով ՀՀ Նախագահի հրամանագրերի և ՀՀ Կառավարության որոշումների վրա:

Ինչ վերաբերում է պատմության և մշակույթի հուշարձանների քրեախրավական պահպանությանը, ապա նշենք, որ հանցավորության դեմ պայքարի շրջանակներում այն համեմատաբար երիտասարդ ուղղություն է, քանի որ մարդկության կողմից պատմամշակութային ժառանգության հանդեպ (նախ և առաջ անտիկ

շրջանի) հետաքրքրությունն առաջացել է Վերածննդի ժամանակաշրջանում, իսկ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությանն ուղղված միջոցառումները ձևավորվել և իրենց իրավական հիմքերն են ստացել XIX դարում Եվրոպայում:

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունը մշակութային և պատմական նշանակություն ունեցող օբյեկտների պահպանմանն ու պաշտպանությանն ուղղված միջոցառումների համակարգ է: Այդ միջոցառումները ներառում են հուշարձանների հետազոտությունը, նրանց արժեքի գնահատումը, պաշտոնական կարգավիճակի շնորհումը, վերականգնումն ու ամրակայումը:

ՀՀ գործող քր.օր-ի 264-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում պատմության և մշակույթի հուշարձաններ ոչնչացնելու կամ վնասելու համար, այն է՝ պետության պահպանության տակ գտնվող պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները կամ փաստաթղթերը ոչնչացնելու կամ վնասելու համար:

Պատմամշակութային հուշարձանների հասկացությունը և տեսակները տրվում են «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» 1998թ. նոյեմբերի 11-ի ՀՀ օրենքում: Նշված օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ են պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված

տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիպագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արժեքները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

Ինչ վերաբերում է առանձնակի արժեք ունեցող առարկաներին կամ փաստաթղթերին, ապա դրանք սահմանվում են ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N 1643-Ն որոշմամբ հաստատված ցանկով, որը ներառում է Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր 19 անուն մշակութային արժեքներ:

Որպես ուսումնասիրվող հանցագործության որակյալ հատկանիշ՝ ՀՀ քր.օր-ի 264-րդ հոդվածի 2-յու մասով նախատեսվում է առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների նկատմամբ ոտնձգություն:

Օբյեկտների կամ հուշարձանների առանձնակի արժեքավորությունը պարզելու համար, կարծում ենք, կրկին հարկավոր է անդրադառնալ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքին, որի 6-րդ հոդվածը սահմանում է հուշարձանների տեսակները: Նշված հոդվածի համաձայն՝ հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության:

Հանրապետական նշանակության հուշարձանների կարգին են դասվում ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների բարձրարժեք, հնագույն, տիպական կամ հազվագյուտ նմուշները, իսկ տեղականի կարգին՝ հանրապետության որևէ տարածաշրջանի պատմությունն ու մշակույթը, տեղական առանձնահատկությունները, բնութագրող հուշարձանները:

Վերոնշյալ օբյեկտների կամ հուշարձանների առանձնակի արժեք ունենալու չափանիշներից մեկն է: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 6-յու հոդվածում նշվում է նաև, որ «պատմամշակութային բացառիկ արժև ունեցող հուշարձանները միջազգային մակարդակով սահմանված չափանիշ-

ներով կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում»:

Այսինքն՝ ուսումնասիրվող օբյեկտի իմաստով, հուշարձանները կարող են ունենալ նաև միջազգային կամ համաշխարհային նշանակություն:

Ընդ որում համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում ընդգրկվելը հուշարձանի արժեքի բարձրագույն աստիճանն է համարվում:

ՀՀ քր.օր-ի 264-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է սահմանում պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժև ունեցող առարկաները կամ փաստաթղթերը անզգուշությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար, եթե այդ արարքները պատճառել են խոշոր վնաս: Նշված հոդվածի 4-րդ մասը՝ նույն արարքների համար, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների նկատմամբ կամ պատճառել են առանձնապես խոշոր վնաս, նախատեսում է ավելի խիստ պատիժ:

Կարծում ենք՝ ՀՀ քր.օր-ի 264-րդ հոդվածի ձևակերպումը հաջող չէ: Նախ, ուսումնասիրվող հոդվածի առաջին մասում որպես հանցագործության առարկա խոսվում է ինչպես հուշարձանների, այնպես էլ առանձնակի արժեք ունեցող առարկաների կամ փաստաթղթերի մասին: Օրենսդրի մոտեցումն այս առումով անհասկանալի է, քանի որ առանձնակի արժեք ունեցող առարկաների կամ փաստաթղթերի հափշտակության, ինչպես նաև այդ ընթացքում դրանք անզգուշությամբ վնասելու կամ ոչնչացնելու պարագայում որպես հանցագործության օբյեկտ է դիտում սեփականությունը: Բացի այդ անհասկանալի է նաև «առանձնակի արժև ունեցող օբյեկտներ կամ հուշարձաններ» հասկացությունը: Մեր կողմից տրրվում է այս հասկացության դոկտրինալ մեկնաբանությունը, սակայն՝ որպես հանցագործության որակյալ հատկանիշ, հոդվածում անհրաժեշտ է առավել հստակ օրենսդրական սահմանում: Եվ վերջապես, նշված հոդվածը միաժամանակ պատասխանատվություն է սահմանում դիտավորյալ և անզգուշ հանցագործությունների համար՝ նախատեսելով խոշոր և առանձնապես խոշոր վնաս, որը տվյալ պարագայում չի բխում քրեական օրենսգրքի ընդունված կառուցվածքից:

«Արունջայի հիման վրա հնարավոր ենք համարում, պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտում քրեական քաղաքականության զարգացման, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսդրության կատարելագործման նկատառումներով, ներկայացնել հետևյալ առաջարկությունները:

ՀՀ քր.օր-ի 264-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան առաջարկում ենք շարադրել հետևյալ կերպ. «1.Պետության պահպանության տակ գտնվող պատմության և մշակույթի հուշարձանները դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը՝ պատժվում է...»:

ՀՀ քր.օր-ի 264-րդ հոդվածի 2-րդ մասը կարելի ներկայացնել այսպիսի խմբագրությամբ.

«2.Նույն արարքը, որը կատարվել է համազգային (հանրապետական) նշանակության հուշարձանների նկատմամբ՝ պատժվում է...»:  
Կարծում ենք՝ նպատակահարմար է նաև, որ-

պես հատկապես որակյալ հատկանիշ ՀՀ քր.օր-ի 264-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսել հետևյալը.

«3.Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է համաշխարհային նշանակության հուշարձանների նկատմամբ պատժվում է...»:

Բացի այդ, նույն սկզբունքով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքում ընդգրկել 264<sup>1</sup>-րդ հոդվածը, որը պատասխանատվություն կսահմանի պատմության և մշակույթի հուշարձանները անզուգույթյամբ ոչնչացնելու կամ վնասելու համար:

Կարծում ենք՝ վերը նշված առաջարկությունները կնպաստեն պատմության և մշակույթի հուշարձանների քրեախրավական պաշտպանությանը, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանության ոլորտում քրեական քաղաքականության ամրապնդմանը:

Կոռուպցիայի, ինչպես և հանցավորության դեմ պայքարում բնդհանրապես, ոչ միայն միջազգային, այլև ներպետական հարթությունում մշտապես դրսևորվում է, քերևա, ևրկակի չափանիշներով մոտեցում: Մի կողմից որոշ միջազգային իրավական փաստաթղթերում գերիշխում է հանցավորության դեմ պայքարի խնդիրը, ինչը մասամբ սովերում է թույլում մարդու իրավունքների պաշտպանության որոշ հարցադրումներ: Մյուս կողմից, մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները միտված են նկատելի չափով սահմանափակելու հանցավորության դեմ պայքար իրականացնող պետական մարմինների, հատկապես իրավապահ մարմինների լիազորությունները, որպեսզի հնարավորինս առավել երաշխավորված լինի մարդու իրավունքների պաշտպանվածությունը, քացառվեն պաշտոնատար անձանց կողմից հնարավոր կամայականությունները:

Այս իրարամերժ մոտեցումները սոսկ սևասկան հարթությամբ չեն սվարսվում, դրանք որոշակի դրսևորումներ են ունենում նաև գործնականում: Բնորոշ է այն, որ միևնույն հարցի առնչությամբ (տվյալ դեպքում խոսքը քրեական պատասխանատվության անձեռնմխելիության իրավունքից օգտվող անձանց շրջանակի մասին է), օրինակ, Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Վենետիկի հանձնաժողովի փորձագետների կողմից միմյանց չհամապատասխանող եզրակացություններ են ներկայացվել:

Այս տարաբնույթ մոտեցումները մասամբ սպասելի են, սակայն, կարծում եմ, որ երկու դեպքում էլ անհարկի տարակարծություններից խոստովելու համար հարկ է հնարավորինս գերծմնալ ծայրահեղություններից և հաշվի առնել այն իրողությունը, որ ցանկացած խնդրի լուծման նկատմամբ անհրաժեշտ է դրսևորել համալիր մոտեցում: Մասնավորապես, յուրաքանչյուր նորամոծություն կարող է հիրավի արժեքավոր լինել միայն այն դեպքում, երբ այն երաշխավորում է ոչ միայն, օրինակ, հանցավորության դեմ պայքարի արդյունավետությանը, այլև չի վնասում մարքու իրավունքների պաշտպանության ինստիտուտին:

Հավաստիացնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում ամեն ինչ արվում է հենց վերո նշված սկզբունքով իրականացնելու հակակոռուպցիոն ռազմավարությունը: Այս ոլորտում մենք փործում ենք զերծ պահել հասարակությանը անհարկի ցնցումներից, ժամանակավրեպ լուծումներից և անհեռանկար քայլերից:

Արդեն իսկ կատարված աշխատանքների և ներկայումս լայն շրջանառության մեջ դրված հակակոռուպցիոն ռազմավարության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է քայլերի տրամաբանական ներքին կապ ու անհրաժեշտ շարունակականություն:

2008թ. ապրիլին Հայաստանի Ազգային ժողովը հաստատեց Կառավարության ծրագիրը, որում կոռուպցիայի դեմ պայքարը համարվեց որպես պետական քաղաքականության առանցքային բաղադրիչ: Եվ այդ ծրագրում, և մշակվելիք հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների մասին ծրագրում (ՀՌԻՄԾ) Կառավարությունը միանշանակ պարտավորվել է անվերապահորեն ներառել ԳՐԵԿՈ-ի և Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏԶՀԿ)՝ անցումային տնտեսություններ ունեցող երկրների հակակոռուպցիոն ցանցին Հայաստանի անդամակցությունից և ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի Կոնվենցիայից բխող պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև դրանցից բխող իրավական ակտերի ընդունմանը նվիրված դրույթներ:

Ես նպատակահարմար եմ գտնում հակիրճ անդրադառնալ ՀՌԻՄԾ-ի հիմնադրույթներին: Դրանց նույնիսկ հյալնցիկ ծանոթությունը կարող է մի շատ արամաբանական հարց առաջացնել. ի՞նչ նկատառումներով նույն այդ միջոցառումները հնարավոր չէ՞ր ավելի վաղ շրջանում նախատեսել ու իրագործել: Պատասխանը, քերևա, բխում է վերևում հնչած տեսակետից, արդյունավետ կարող են լինել միայն այն քայլերը, որոնց համար տվյալ հասարակությունում և տվյալ ժամանակահատվածում ձևավորվել են սցյալական, իրավական և հոգեբանական անհրաժեշտ

նախատրյալներ: Ստորև կփորձեն անդրադառնալ նաև այդ նախատրյալներին:

Պայմանականորեն հակակոռուպցիոն ռազմավարության մշակման և համալիր իրականացման գործընթացները մեր երկրում տարանջատվում են երկու փուլի: I-ին փուլում, որն ընդգրկում է 2003-2008թթ., մենք առավել մեծ ուշադրություն էինք դարձնում կոռուպցիայի կանխարգելման համակարգի ներդրմանը, նոր կառույցների ձևավորմանը և իրավական համակարգի բարելավմանը: Դրանք արդիական են նաև այսօր, սակայն որոշակիորեն փոխվել են ակցենտները:

Միայն կոռուպցիոն կրեույթների կանխարգելման նկատառումով հիշյալ փուլում ընդունվեց շուրջ 50 օրենք և օրենսդրական ակտ: Ինստիտուցիոնալ առումով էական նշանակություն ունեցավ վարչապետի գլխավորությամբ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի և Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիթորինգի հանձնաժողովի ստեղծումը:

Նկատելի ձեռքբերումներից են անօրինական գործարքների միջոցով եկամուտների ձեռք բերելու երևույթի դեմ պայքարի մեխանիզմների ներդրումը, հարկերի և մաքսատուրքերի հաշվառման և վճարման ընթացակարգերի պարզեցումը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների կրճատումն ու տրամադրման գործընթացների պարզեցումը, տնտեսական մրցակցության պաշտպանության ինստիտուտի ներդրումը:

Համոզված եմ, առավել էական նշանակություն ունեցան պետական ծառայության բարեփոխումները: Արդեն անցյալում է մնացել նախարարի կամ որևէ գերատեսչության ղեկավարի փոփոխության արդյունքում քաղաքական ծառայողների համատարած փոփոխությունների անընդունելի երևույթը, այդ անձանց ոչ բավարար պաշտպանվածությունը քաղաքական կամայականություններից և այլն: Միաժամանակ, քափանցիկ ու անհամեմատ պատասխանատու և դարձել պետական ծառայողների գործունեությունը:

Ներկայումս հրատապ է նաև դատական համակարգում կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի խնդիրը, թեպետ, նկատեն, որ այդ ոլորտում էական նշանակություն ունեցող քայլեր են արվել, բացառվել է գործադիր իշխանության ազդեցությունը դատավորների նշանակման, առաջխաղացման, դատավորների կարգապահական պատասխանատվության և այլ ոլորտներում, ներդրվել են արդարադատության մատչելիությունը նկատելիորեն բարելավող ինստիտուտներ և այլն: Միաժամանակ, հանրային քննարկման առարկա խնդիրների սոցիոլոգիական հետազոտությունը վկայում է, որ փոխվել են շեշտադրումները, քննարկման առարկա են դարձել արդեն ոչ այնքան բացահայտ ու խիստ տարածված կրեույթները: Սակայն նաև դրանց առնչությամբ սուր հարցադրումները ցույց են տալիս, որ և իշխանությունները և հասարակությունը համապատասխան քաղաքական կամք ունեն դրանք ևս բացառելու առումով:

Սկսած 2004 թվականից, երբ Հայաստանը անդամակցեց ԳՐԵԿՈ-ին, հետևողականորեն կատարվում են ստանձնած միջազգային պարտավորությունները: ԳՐԵԿՈ-ի I-ին զեկույցն ընդունվել է 2006թ. մարտին: Այն ներառել է 24 առաջարկություն, որոնցից 20-ը վերաբերում է իրավական ընթացակարգերի ձևավորմանն ու բարելավմանը, իսկ 6-ը՝ հանրային ծառայողների և աուդիտորների վերապատրաստմանը: Մեկ առաջարկություն վերաբերում է Հայաստանում կոռուպցիայի դրսևորումների տարածվածությունը պարզելուն ուղղված համալիր ուսումնասիրություններ կատարելուն և ևս մեկը՝ տվյալ ոլորտին հանրության իրազեկվածության բարձրացմանը:

Հայաստանը ներգրավված է նաև ՏԶՀԿ-ի՝ նախկին խորհրդային 8 երկրների համար նախաձեռնած «Ստամբուլի հակակոռուպցիոն գործողությունների պլան» ծրագրում:

Եվրամիության եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում Եվրամիությունն ու Հայաստանը 2006թ. վավերացրել են գործողությունների ծրագիր, որում կոռուպցիայի դեմ պայքարը որակված է որպես գերակա ոլորտ:

Կոռուպցիայի դեմ պայքարի 2-րդ փուլն ընդգրկում է 2009-2012թթ.: Նախանշված ծրագրային առաջադրանքների վերջնական նպատակն այն է, որ 2012թ. մեր երկրում վերանա կոռուպցիայի *համակարգային* բնույթը, նշանակալիորեն ասիմանավակվի դրա տարածվածության աստիճանը, հսպես բարելավվի հանրային ծառայությունների որակը, ապահովվի սոցիալական արդարության համարժեք ընկալումը, ամրապնդվի երկրի քաղաքական համակարգի կայունությունը, լիարժեք նախապայմաններ ստեղծվեն տնտեսական ազատականության և մրր-

ցակցության համար:

Հիշյալ խնդիրների իրականացման նպատակով հարկ է նվազագույնը իրականացնել հետևյալ օրենսդրական և կազմակերպական բարեփոխումները՝

- հստակ կանոնակարգել պաշտոնյաների վարքագծի և շահերի բախման, շահերի հայտարարագրման ինստիտուտները,

- կոռուպցիա հանդիսացող արարքների շրջանակի հստակ սահմանումը,

- կոռուպցիայի համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետների վերանայումը,

- սահմանափակել անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնյաների շրջանակը,

- ներառել սևոսկություններ հաղորդող անձանց պաշտպանության ինստիտուտ,

- բարելավել հանրային ծառայողների վարձատրության և սոցիալ-տնտեսական ապահովվածության վիճակը,

- զարգացնել միջազգային համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարում:

Վերոհիշյալ հիմնադրույթները կառավարման առանձին ոլորտներում ունեն նկատելի առանձնահատկություններ, որոնց բավարար չավով անդրադարձ կա հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրում:

Արդարադատության նախարարության դերակատարումը կոնկրետ հակակոռուպցիոն ռազմավարության մշակման աշխատանքներում համարվում է առանցքային, քանզի միջոցառումների գերակշիռ մասի պատասխանատուն հենց այդ նախարարությունն է:

Շնորհակալություն ուշադրության համար, կարծում եմ, մոտ ապագայում մենք հարկադրված չենք լինի վերոհիշյալ հարցերի մասին այսչափ սուր շեշտադրումներով խոսելու:

*Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՐՅԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ներկա դարաշրջանում, երբ անժխտելի հրամայական է դարձել մարդու իրավունքների պաշտպանության ժողովրդավարական և քաղաքակիրթ եղանակների ներդրման անհրաժեշտությունը, արդարադատության մատչելիության սկզբունքը ձեռք է բերել աննախադեպ մեծ կարևորություն: Այն, առանց վարաներու կարելի է, ասել, դարձել է դատավարական սկզբունքների առանցքը: Այս սկզբունքի առնչությամբ քննարկումներն ընթանում են ամենատարբեր ատյաններում և շրջանակներում, ինչին դեռ կանոնադաշտնանք ստորև: Ի դեպ, արդարադատության մատչելիության ինստիտուտը չափազանց տարողունակ է, ուստի փորձելու եմ անկողադաշտնալ առավել վիճահարույց ու արդիական հարցադրումներին:

Արդարադատության մատչելիության հիմնարար սկզբունքի երաշխավորվածությունը՝ արդար դատավարության ապահովման միջազգային հանրաճանաչ նորմերի համակողմանի կիրառման անհրաժեշտության նկատառումով արդի պայմաններում գործնականում ուղեկցվում է այնպիսի սոցիալ-հոգեբանական գործոններով, որոնք դեռևս, մեր կարծիքով, բավարար խորությամբ և ասպեկտներով չեն հետազոտվել: Նկատի ունենք այն, որ հիշյալ հարցադրումները քննարկման առարկա դարձնելիս նախապատվությունը անհարկի տրվում է ստանդարտ մոտեցումներին, որոնք միզուցև որոշ առումով ձեռք են բերել դասական նշանակություն, սակայն ներկա զարգացումների համատեքստում ի գործ չեն համալիր ու համարժեք կերպով արտացոլելու նշված ոլորտում առկա հիմնախնդիրները և կանխորոշելու դրանց լուծման առավել նախընտրելի ուղիները:

Մինչ բուն խնդրին անդրադառնալ, նպատակահարմար եմ գտնում հակիրճ լուսարանել այն զարգացումները, որոնցով պայմանավորված է վերոհիշյալ երևույթը, քանզի դա խիստ անհրաժեշտ է ստորև ներկայացվող եզրահանգումների ուղղվածությունը համարժեք պատկերացնելու համար: Կարծում եմ, որ ներկայումս ոչ միայն հիշյալ, այլև տարաբնույթ այլ բարդ հարցադրումների գիտական հետազոտության բնագավառում հստակ ու համակարգված եզրահանգումների բացակայությունը մասամբ պայմանավորված է մեթոդաբանության խնդիրներով: Չբացառելով իրավագիտության սերտ կապը գիտության հարակից այնպիսի ճյուղերի հետ, ինչպիսիք են սոցիոլոգիան, հոգեբանությունը, բարոյագիտությունը և քաղաքական տեսությունը, միաժամանակ խիստ անհրաժեշտ եմ համարում մեթոդաբանության տարբերակվածության պահպանումը, տարաբնույթ հարցադրումները չեն կարող միատեսակ մեթոդաբանությամբ ուսումնասիրության առարկա դառնալ, քանի որ սինկրետիզմը գրեթե առանց բացառության մշտապես հանգեցրել է հետազոտությունների մակերեսայնությանը: Առավել մտահոգող է այն, որ վերջին շրջանում նկատվում է կենցաղավարության մեթոդաբանությամբ իրավագիտության բարդ հարցադրումներին լուծումներ առաջադրելու միտում: Արդյունքը լինում է այն, որ յուրաքանչյուր քաղաքական գործիչ, դեռ չանդրադառնանք ցանկացած այլ անձի, համոզված է, որ ինքը համընդհանուր մտածելակերպի չափանիշներով կարող է, օրինակ, իրավաստեղծ ոլորտում վերջին ճշմարտություններ հրամցնել հանրությանը:

Հանրության մեջ, ցավոք՝ գերիշխում է այն թյուր կարծիքը, ըստ որի իրավական խնդիրները կարող են լուծվել համընդհանուր մեթոդաբանությամբ, իսկ իրավաբանների խնդիրը սոսկ իրավական տեխնիկայի կանոնների ապահովումն է:

Ստեղծված իրավիճակում իրավագետների մի որոշ մասը, իմ խորին համոզմամբ, նախընտրել է հարմարվողականության գործելաճը, համոզված լինելով, որ ձևավորված կարծրատիպերը վերանայել գրեթե հնարավոր չէ: Մինչդեռ, նման դիրքորոշումը կարող է պայմանավորված լինել կամ մասնագիտական անհամարժեք պատրաստվածությամբ, կամ քաղաքական ու գերատեսչական կոնյուկտուրայով: Մենք չենք կարող հանրությանն առաջադրել հիրավի առաջադիմական, համընդհանուրի շահերի հաշվառմամբ ու արդյունավետ լուծումներ, քանի դեռ չենք գիտակցել առնվազն նեղ գերատեսչական շահերից ձերբազատվելու խիստ անհրաժեշտությունը:

Փորձենք մի այսպիսի պարզ և միաժամանակ հստակ հարցի պատասխանել, դատաիրավական բարեփոխումների ողջ ընթացքում հանդիպել՝ ենք այս կամ այն համակարգում որևէ պաշ-

տոն գրադեցնող իրավաբանի, որը հանդես գար իր պաշտոնական լիազորությունների կամ տրվ-  
յալ համակարգի իրավասությունը սահմանափակելու, այն ժողովրդավարության չափանիշներին  
համապատասխանեցնելու նախաձեռնությամբ: Համոզված եմ՝ պատասխանը գոհացուցիչ չի լի-  
նի, սակայն որքա՞ն ենք հանդիպել ճիշտ հակառակ պատկերի, երբ, ընդունենք, դատավորը  
հետևողականորեն հիմնավորում է քննիչի կամ դատախազի լիազորություններն արմատապես  
սահմանափակելու, դատավորի կողմից նրանց նկատմամբ վերահսկողության, անգամ սանկցիա-  
ներ կիրառելու անհրաժեշտությունը:

Երբևէն արտաքուստ այն տպավորությունն է ստեղծվում, որ գերատեսչական շահերի իրա-  
վաչափ բաշխման դեպքում հիշյալ խնդիրն ինքնըստինքյան կլուծվի, սակայն գործնականում  
իրավիճակը փոքր-ինչ այլ է: Այսպես, օրինակ՝ դատական համակարգի նկատմամբ անհարկի իշ-  
խանություն ունեցող արդարադատության նախարարը կարծես ենթագիտակցաբար փորձում է  
պաշտպանել բացառապես դատական համակարգի շահերը, ընդ որում, բացառապես այն շահե-  
րը, որոնք որևէ կերպ չեն խաչաձևվում իր կողմից իրականացվող իշխանության սահմանափակ-  
ման անհրաժեշտության հետ:

Ինչևէ, օրինակները բազմաթիվ են, որոնք բոլորն էլ պարտադրում են մեզ լինել առավել  
անաչառ, պրոֆեսիոնալ և լինել առավել նախաձեռնող, զերծ մնալ բացառապես իրավասու միջազ-  
գային կառույցների թելադրանքով պարտադրված գործերու հրապուրանքից:

Սույն հետազոտությունում նպատակահարմար ենք գտել քննարկման առարկա դարձնել  
հատկապես նշված հիմնախնդրի իրավագիտության տեսանկյունից սոցիալ-հոգեբանական չա-  
փանիշները, որով ցանկանում ենք տեսանելի դարձնել այն իրողությունը, որ երբեք սոսկ  
իրավական լուծումներով հնարավոր չէ առաջադրել այնպիսի լուծումներ, որոնք գործնականում  
կունենան անհրաժեշտ արդյունավետություն: Միաժամանակ, նպատակահարմար ենք գտնում  
բացահայտել դատաիրավական բարեփոխումների գործընթացներին զուգահեռ սոցիալ-հոգեբա-  
նական զարգացումների էվոլյուցիան: Վերջին հաշվով, մասնագիտական հոգեբանությունը և դրա  
դրսևորումները ստատիկ կատեգորիա չեն, դրանք փոխկապակցված են հասարակությունում ըն-  
թացող զարգացումներով՝ ընդհանրապես, դատաիրավական բարեփոխումներով՝ մասնավորա-  
պես: Տվյալ դեպքում այս կամ այն չափով իրեն զգացնել է տալիս ինչպես հարմարվողականության  
բարդույթը, այնպես էլ յուրաքանչյուր իրավիճակում յուրովի ելքեր փնտրելու և ինքնատիպ ելուստ  
միտումը:

Որպես կանոն, արդարադատության մատչելիության ինստիտուտը փոխկապակցվում է  
դատարան դիմելու իրավունքի հետ: Ընդ որում, նկատի են ունեցվում բոլոր ատյանի դատարան-  
ները: Այդ իսկ նկատառումով ներկայումս Էսկան նշանակություն է ձեռք բերել միջանկյալ և գործն  
ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման հարցադրումը: Միաժամանակ, գերիշխում  
է այն դիրքորոշումը, ըստ որի դատական ակտերի վերաբնության կամ վճռաբեկության կարգով  
բողոքարկելու իրավունքը պետք է հավասարակշռի նույն դատական ակտերի որոշակիության  
սկզբունքին, քանզի ենթադրվում է, որ բողոքարկման սահմանների անհարկի ընդլայնումը կարող  
է խաթարել հիշյալ սկզբունքի իրավակիրառական նշանակությունն ու նսեմացնել արժեքը:

Հաշվի առնելով ամբողջ աշխարհում ներկայումս նկատվող խախտված իրավունքները դա-  
տական եղանակով պաշտպանելու միտումով պայմանավորված գործերի կտրուկ աճը և դրա  
հետևանքով դատարանության աննախադեպ մեծ ժամկետների փաստը, խիստ արդիական է դար-  
ձել նաև, այսպես կոչված, արագացված ընթացակարգերի ներդրման անհրաժեշտությունը: Ավե-  
լին, այս խնդիրները ներկայումս արդիական մեծ հնչեղություն են ձեռք բերել նաև Մարդու իրա-  
վունքների եվրոպական դատարանի գործունեության մեջ: Նկատի ունենաք, որ ներկայումս այդ  
դատարանում մուտքագրված դիմումների քանակը հասել է 110 հազարի: Թերևս, հենց այդ հիմ-  
նախնդրի լուծման առնչությամբ են մեծ հնչեղություն ձեռք բերել թիվ 14-րդ արձանագրությունն ու  
Եվրոպայի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված 5 հանձնարարականները:

Կարծում եմ, որ արդարադատության մատչելիության խնդրին հարկ է, նախ, ընդգծված հա-  
մալի մոտեցում ապահովել: Չպետք է խախտված իրավունքների բացառապես դատական  
պաշտպանության իրավունքը դարձնել գերխնդիր, իսկ մեծարանակ հայցերի ու դիմումների լուծ-  
ման առավել արդյունավետ ուղին արագացված դատաքննությունը դարձնելը: Բնականաբար,  
պետք է յուրաքանչյուր ոք օժտված լինի իր խախտված իրավունքները դատական կարգով պաշտ-

պանկոյ իրավական հնարավորությամբ (մեր երկրում, հանձինս Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների, դա անգամ ամրագրված է որպես սահմանադրական իրավունք), սակայն առավել առանցքային նշանակություն ունի մարդու իրավունքների երաշխավորվածությունը, այդ առնչությամբ դատական ակտերի կատարման այնպիսի սկզբունքներ սահմանելը, որոնք ոչ միայն միտված կլինեն կոնկրետ գործերով կայացված դատական ակտերի անվերապահ կատարմանը, այլև նմանաբնույթ այլ իրավիճակներում իրավունքների խախտման դեպքերի կանխմանը:

Մ.թ. հոկտեմբերի 6-ին իմ և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահ պարոն Ժան-Պոլ Կոստայի միջև կայացած պաշտոնական հանդիպման ընթացքում վերջինս, մտահոգություն հայտնելով մուսք եղած դիմումների աննախադեպ մեծ քանակի առնչությամբ, նկատեց, որ այդ առթիվ, որպես առավել բնորոշ տարբերակներ, քննարկվում են արագացված դատաքննության, ինչպես նաև միայն մեկ դատավորի կազմով առյաններ կազմելու վերաբերյալ առաջարկությունները: Սկզբունքորեն չառարկելով այդ մոտեցումների դեմ, ներկայացրեց ևս հետևյալ նկատառումները՝

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ կամա, բև ակամա, ընկալվում է, որպես քաղաքականացված դատական առյան: Բազմիցս մի շարք պետություններ հրապարակավ իրենց դժգոհությունն են հայտնել այն առնչությամբ, որ միատեսակ իրավիճակներում հիշյալ դատական առյանը ցուցաբերում է անհարկի տարբերակված մոտեցում: Վերջին հաշվով, առանձին պետությունների միջև հակամարտությունը պատմական զարգացումների ներկա փուլում հասել է այնպիսի աստիճանի, որ, օրինակ՝ անհանրութելի սխալ կլինի հուսալ, որ, ասենք, Արբելջանից բնարված դատավորը միանշանակ անաչառ կլինի Հայաստանի Հանրապետության հետ կապված այնպիսի գործով, երբ վիճարկվում է փախստականի խախտված իրավունքի հարցը: Նման պայմաններում միանձնյա դատական առյանների գործունեությունը կարող է խիստ խոցելի լինել և էլ ավելի նվազեցնել միջազգային դատարանի հեղինակությունը,

- արագացված դատաքննության ինտոխտուտր բնավ չի նվազեցնի դիմումների հոսքը, հակառակը՝ այն կարող է նպաստել այդ հոսքի աճին: Հարկ է նկատի ունենալ, որ տեսական դատաքննության հանգամանքը հոգեբանորեն հրապուրիչ չի դարձնում միջազգային դատական առյան դիմելը, իսկ պարզեցված դատաքննությունը դիմումների աճի մի նոր հզոր ազդակ կլինի,

- առավել նպատակահարմար է վերս նշված նորամուծություններին, հատկապես արագացված դատաքննությանը գուգահեռ կիրառության մեջ դնել այնպիսի բնրացակարգեր, որոնք կբացառեն ակնհայտ միատեսակ գործերով լրիվ ծավալով դատաքննություն նախաձեռնելը: Մասնավորապես, անհասկանալի է, թե ինչու միատեսակ գործերով միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտը չի կարող հիմք հանդիսանալ մյուս գործերի համար և անհարկի դատավարությունների առարկա չդառնալ: Ընդ որում, այս հարցում անհրաժեշտ է վերանայել ոչ թե միջազգային դատարանում կիրառվող դատավարության կանոնները, այլև ազգային օրենսդրությունը:

Այս առնչությամբ նկատեմ, որ արդեն իսկ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ մշակված քրեական դատավարության օրենսգրքի նախագծում, ինչպես նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծում ներառվել են դրույթներ, որոնք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերում կարող են նոր հանգամանք հանդիսանալ այն գործերով, որոնց հանգամանքները միատեսակ են:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ խոսքը բնավ նախադեպային դատական ակտերի մասին չէ, երբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեկնարանում և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի հիմնադրույթները և առաջադրում նոր դրույթներ: Պարզապես հիմնավորված ենք համարում միատեսակ հանգամանքներին վերաբերող դատական ակտը որպես նոր հանգամանք համարելը: Այսպես, ենթադրենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի բոլոր այն հոդվածները, որոնք առնչվում են վարչական կալանքին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ճանաչվում են Կոնվենցիային հակասող և այդ հիմքով կայացված որոշումը ճանաչվում է որպես Կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված իրավունքները խախտող դատական ակտ: Հարց է ծագում ի՞նչ իմաստ ունի Մարդու իրավունքների եվ-

րուպական դատարանի կողմից ընդունված մի քանի տասնյակի հասնող որոշումներով նույնությամբ կրկնել այդ դրույթը: Նման մոտեցումը ոչ միայն ընդունելի չէ, ծանրաբեռնվածությունը հարթահարելու, այլև՝ արդարադատության մատչելիության սկզբունքի կարվածքով մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից:

Փորձենք վերլուծել ներպետական օրենսդրությունը վերը նշված հարցադրման տեսանկյունից: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, ինչպես Սահմանադրական դատարանի կողմից օրենքի հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ որոշումը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում թույլ տալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի որոշումը, որպես նոր հանգամանք, հիմք է բացառապես տվյալ քրեական գործով կայացված դատական ակտը վերանայելու համար: Ի դեպ, այս առնչությամբ սահմանադրական դատարանն իր 2009թ. հոկտեմբերի 13-ի բիլ ՍԳՈ-833 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել միայն 426.4 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այսինքն՝ միայն սահմանադրական դատարանի որոշմանը վերաբերող օրենսդրական դրույթը:

Տվյալ դեպքում նպատակ չունեն խոցելի համարելու սահմանադրական դատարանի որոշումը, սակայն համոզված եմ, որ մասամբ հակասահմանադրական է նաև նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, քանի որ, եթե օրենքը ճանաչվում է միջազգային պայմանագրին հակասող, ապա դա հիմք է արձանագրելու, որ դատավորը թույլ է տվել այդ միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում: Նկատի ունենք այն, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի և վավերացված միջազգային պայմանագրի միջև հակասության դեպքում, կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը: Հետևաբար, թողր այն դեպքերում, երբ դատարանը կիրառում է ոչ թե միջազգային պայմանագրի, այլ դրան հակասող օրենքը, խախտում է այդ միջազգային պայմանագրով սահմանված իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Նշված 2-րդ կետը, այսպիսով, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանում է միայն այն մասով, որ միջազգային դատարանի դատական ակտը կարող է վերաբերել ոչ թե օրենքի իրավաչափությանը, այլ իրավաչափ դատավարական կամ նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառմանը:

Համեմատական վերլուծությունը նույնպես վկայում է, որ արդարադատության մատչելիության նկատառումով ներպետական օրենսդրությունը ևս հակված է վերը նշված մոտեցումներին նախապատվություն տալուն: Նկատի ունենք այն, որ այս դեպքում դարձյալ նախապատվությունը տրվում է դատական կազմի կոլեգիալության սկզբունքից հնարավորինս միանձնյա կազմին անցում կատարելու, դատավորների քվաքանակը ավելացնելու, արագացված ընթացակարգեր ներդնելու եղանակներին: Ընդ որում, հաճախ այդ նորամուծությունները հիմնավորելիս հղում է կատարվում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչներին, իսկ թե ինչ նկատառումներով են վերջիններս իրենց անվերապահ համաձայնությունը տալիս, արդեն այդ հարցին անդրադարձել ենք:

Դատական քաշշուկների երևույթը որևէ կերպ չի կարող արդարացվել, սակայն ցանկացած նորամուծություն, որն ուղղված կլինի այդ քաշշուկների դեմ, կարող է ընդունելի լինել միայն այն դեպքում, երբ դրանք իրենց հերթին չեն հանդեցնում դատավարական այլ կարևոր սկզբունքների անտեսմանը: Հատկապես այնպիսի առանձնապես ծանր հանցագործությունների գործերի քննությունը, որոնցով կարող է նշանակվել ցմահ ազատազրկում, մեկ դատավորի կողմից քննելը հղի է բազմաթիվ մտահոգիչ երևույթներով:

Սակայն անդրադառնանք առավել էական նշանակություն ունեցող խնդիրների: Գրանցից է, քերև, այնպիսի հայցադիմումների քննարկման հարցը, որոնք ներառում են միմյանց հետ սերտորեն փոխկապակցված, սակայն տարբեր դատական առյաններին ընդդատյա հարցեր: Ցավոք, դատաիրավական բարեփոխումների առաջին փուլն ավարտվեց այն մոտեցումների ամրագրմամբ, ըստ որոնց, ընդունելի չհամարվեց այդպիսի հայցադիմումների քննարկումը միևնույն դատական առյանի կողմից, պատճառաբանությունն այն էր, որ իրավաչափ չէ, երբ քաղաքացիական հայցը քննարկվում է վարչական դատավարության կանոններով, կամ վարչական ակտը վի-

ճարկելու վերաբերյալ դիմումը քննարկվում է քաղաքացիական դատավարության կանոններով:

Ամբողջ խնդիրն այն է, որ որևէ մեկը չէր էլ վիճարկում նշված մոտեցումը, իսկ քաղաքացիական հայցի քննարկումը վարչական դատարանի կողմից բնավ չի ենթադրում, որ այն պետք է իրականացվեր բացառապես վարչական դատավարության կանոններով: Պարզապես հարկ էր սահմանել մի այնպիսի հիմնադրույթ, որը հնարավորություն կտար գնահատելու հիմնական պահանջը և լատ դրա էլ կանխորոշելու գործը քննող դատարանը, այսինքն՝ եթե քաղաքացիական հայցով ուղեկցվող հիմնական պահանջն ընդդատյա լինի վարչական դատարանին, ապա հայցադիմումն ամբողջ ծավալով կարող էր քննել վարչական դատարանը: Ընդ որում, հայցադիմումի՝ վարչական դատարանին ընդդատյա մասը կարող էր քննվել վարչական դատավարության կանոններով, իսկ ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա մասը՝ քաղաքացիական դատավարության կանոններով: Վերջին հաշվով, որևէ սկզբունքային հարց չենք լուծում, կրթ այս կամ այն դատարանին մասամբ վերապահում ենք դատավարության այլ կանոններով ղեկավարվելու լիազորություն: Ավելին, գործող օրենսդրությանն արդեն իսկ բնորոշ է այդպիսի մոտեցումը: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հետևյալ նորմը. «Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է, եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով»:

Հաջորդ կարևոր հարցադրումը վերաբերում է դատական ակտերի դեմ բերված բողոքների քննարկման ընթացակարգերին: Ինչպես արդեն նշվեց, առայսօր նախապատվելի են համարվել այսպես կոչված, դասական մոտեցումները, լատ որոնց՝ հարկ է հնարավորինս մեծաքանակ բողոքներ ընդունել քննարկման: Այդ իսկ նկատառումով վերանայվում են բողոքները քննարկման ընդունելու հիմքերը, պարզեցվում են ընդունելության հարցը քննարկելու ընթացակարգերը, ավելացվում է վճռաբեկ դատավորների քանակը և այլն:

Կարծում եմ՝ հայեցակարգային առումով հարկ է էսպես վերանայել բողոքների քննարկման ընթացակարգերի վերաբերյալ ներկայումս տարածված մոտեցումները: Փորձենք պատասխանել հետևյալ հարցերին. ի վերջո ի՞նչ սկզբունքով է ավելացվում քննարկման ենթակա բողոքների քանակը, նպաստո՞ւմ են արդյոք այդ մոտեցումները դատական սխալների կրճատմանը, հնարավո՞ր է արդյոք գործող ընթացակարգերով երաշխավորել քննարկման չընդունված բողոքներում արձանագրված իրավախախտումների հետևանքով պատճառված վնասի հատուցումը: Եթե հակիրճ պատասխանենք այս հարցադրումներին, ապա պարզ կդառնա, որ հիշյալ մոտեցումները բավարար չափով չեն կանխում նույնիսկ միատեսակ անօրինական դատական ակտեր կայացնելու երևույթը, և, բացի այդ, անվերապահորեն անտեսվում են քննարկման չընդունված բողոքներում արձանագրված իրավախախտումներն ու դրանց հետևանքով պատճառված վնասի հատուցման, խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունը:

Ո՞րն է լուծումը: Այս հիմնարար հարցին պատասխանելիս, կարծում ենք, հարկ է ուշադրություն դարձնել ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրված այն իրավական հիմնադրույթին, որի համաձայն՝ վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Պնդել, թե վճռաբեկ բողոքների մասնակի քննարկմամբ, անգամ, եթե դրանց առնչությամբ կայացվում են բացարձակապես միատեսակ որոշումներ, ապահովվում է սահմանադրական նշված հիմնադրույթը, կարծում են, սխալ կլինի: Հետևաբար, յուրաքանչյուր բողոք, անկախ այն հանգամանակից՝ այն ընդունվում է քննարկման, թե՛ ոչ, պետք է առաջացնի կոնկրետ իրավական հետևանքներ:

Տվյալ իրավիճակում մեր դիրքորոշումը հետևյալն է: Վճռաբեկ դատարանի կողմից բողոքները քննության ընդունելու միակ հիմքը պետք է համարվի դատական սխալը, որն արտացոլվում է նյութական կամ դատավարական օրենքի խախտմամբ: Որևէ նշանակություն չպետք է տրվի այն հանգամանքին, թե ինչպիսի հետևանքներ է առաջացրել կամ կարող էր առաջացնել այդ խախտախախտումը: Մուտք եղած վճռաբեկ բողոքները հարկ կլինի խմբավորել: Մասնավորապես առաջին խմբում պետք է առանձնացնել այն բողոքները, որոնք ներառում են միանգամայն նոր բնույթի վեճեր, կամ նախկինում հայտնի վեճերի առնչությամբ՝ նոր փաստական հանգամանքներ, այսինքն՝ դրանք միևնույն բնույթի առարկայի առնչությամբ միատեսակ վեճն ուղեկցվում են նոր հիմքերով և,

միաժամանակ, եզակի են: Երկրորդ խմբում կենտրոնացվում են այն վճռաբեկ բողոքները, որոնք, ըստ էության, նույնական են նախկինում արդեն իսկ բնական և լուծում ստացած վճռաբեկ բողոքների հետ: Վերջապես, երրորդ խմբում առանձնացվում են այն բողոքները, որոնք, ըստ էության, միատեսակ են, դրանցում առկա տարբերությունները նշանակություն չունեն իրավական լուծումների տեսանկյունից: Վերջին խմբին, օրինակ, կարող են դասվել այն վեճերը, երբ միատեսակ հրամանով աշխատանքից ազատված անձինք վիճարկում են այդ ակտերը:

Առաջին խմբին դասվող վճռաբեկ բողոքները հարկ կլինի ընդունել քննության, իսկ դրանց արդյունքում ընդունված դատական ակտերը նախադեպային նշանակություն կունենան և հնարավորություն կտան ապահովելու օրենքների միատեսակ կիրառման բնականոն գործընթացը:

Երկրորդ խմբի բողոքները քննության չեն բնութագրվում, սակայն կայացվում և բնօրինակով որոշում, որում հղում է արվում նախկինում ընդունված այն որոշման վրա, որը վերջիններիս համար ունի նախադեպային նշանակություն: Բնականաբար, երկրորդ խմբում ներառվում են նաև մի քանի ենթախմբեր, որոնց դատակարգման համար հիմք է ծառայում դրանց նույնականությունը:

Երրորդ խմբում ներառված բողոքներից ընտրվում է միայն մեկը, որի առնչությամբ կայացված դատական ակտը նախադեպային նշանակություն է ունենում այդ խմբում ներառված մյուս բողոքների համար: Այս դեպքում ևս խմբերը, ըստ նույնականության հատկանիշի, կարող են բաժանված լինել առանձին ենթախմբերի:

Վերը նշված համակարգը, իմ կարծիքով, օժտված է հետևյալ առավելություններով՝

- վճռաբեկ դատարանը զգալիորեն նվազեցնում է իր ծանրաբեռնվածությունը, քանի որ քննարկման են ընդունվում բացառապես այն բողոքները, որոնց առնչությամբ ընդունված որոշումները կարող են ունենալ նախադեպային նշանակություն՝ դրանով իսկ ապահովելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրված վերոհիշյալ հիմնադրույթի պահանջը,

- ըստ էության լուծում է տրվում ոչ միայն բնության բնութագրված բույրներին, այլև այն բողոքներին, որոնք չեն ընդունվում քննության, ինչը էական նշանակություն ունի արդարադատության մատչելիության սկզբունքի շրջանակներում գործելու տեսանկյունից,

- էապես նվազում են կռուուպցիոն ռիսկերը, քանի որ միայն մեկ կամ մի քանի գործով ապօրինի դատական ակտ կայացնելու ճգնաժամը շատ ավելի դժվար է կանխել, քան՝ երբ դա տևողի և ունենում միաժամանակ մի քանի հարյուրի հասնող գործով: Բացի այդ, օրենքի միասնական կիրառումը դրական իմաստով սահմանափակում է նաև վճռաբեկ դատարանի հայեցողության շրջանակները,

- համեմատաբար սակավաթիվ գործեր քննության բնութանը անխուսափելիորեն հանգեցնում է յուրաքանչյուր գործին առավել մեծ ժամանակ և մարդկային ինտելեկտուալ ռեսուրսներ հատկացնելուն, ինչը, բնականաբար, հնարավոր չէ ապահովել բողոքների մեծաքանակության պայմաններում: Իսկ եթե դրան հավելենք, որ ներկայումս նկատվում է բողոքների աճ, ապա զուտ «կոնվեյերային» սկզբունքով գործելու վտանգը դառնում է իրատեսական և անխուսափելի:

Ի՞նչ բացասական հետևանքներ կարող է ունենալ այս համակարգը: Մենք արդեն խոսեցինք մուտք եղած բողոքները հանգամանորեն ուսումնասիրելու և դասակարգելու անհրաժեշտության մասին: Ինչ խոսք, սա մեծածավալ աշխատանք է, ինչը բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, կատարում են դատական համակարգի աշխատակազմի համապատասխան աշխատակիցները: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի աշխատակազմում ներգրավված է 650 մասնագետ, ինչը իր թվաքանակով գերազանցում է դատավորների թիվը 13 անգամ: Ի դեպ, մեր երկրում իրականացված դատափրավական բարեփոխումների արդյունքում ևս կտրուկ ավելացվել է դատարանների աշխատակազմերի թվաքանակը: Միայն վճռաբեկ դատարանին սպասարկող՝ դատական դեպարտամենտի համապատասխան ստորարածանումների թվաքանակը գերազանցում է ցանկացած նախարարության աշխատակազմի թվաքանակը:

Բնավ կողմնակից չենք, որ աշխատակազմը, ըստ էության, իրականացնի արդարադատություն: Խնդիրը տվյալ դեպքում բոլորովին այլ հարթության վրա է, մասնավորապես հարկ է, որ այդ աշխատակիցները պատրաստեն ամփոփ տեղեկատվություն յուրաքանչյուր գործով՝ որոշման կայացման լիազորությունը թողնելով համապատասխան դատավորի վրա: Վերջին հաշվով, նույն ընթացակարգն է գործում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

Չպետք է անտեսել նաև ներկա պրակտիկան, երբ առանձին դեպքերում դատավորների օգնականները վերը նշված տեխնիկական աշխատանքը կատարելու փոխարեն, ցավոք, դատական ակտերի նախագծեր են պատրաստում դատավորների համար, ինչը ակնհայտ անընդունելի երևույթ է: Մինչդեռ, մեր առաջարկած տարրերակը միաժամանակ բացառում է հիշյալ երևույթը:

Մեկ այլ հնարավոր բացասական դրսևորում էա. չի բացառվում, որ դասակարգման գործընթացում թույլ տրված սխալի արդյունքում բողոքները հայտնվում են ոչ այն խմբում, որ իրավաչափորեն պետք է հայտնվեին, մանավանդ, որ այդ աշխատանքների կատարմանը էապես ներգրավված են աշխատակազմի աշխատակիցներ, որոնք իրենց մասնագիտական ունակություններով դեռևս բավարար պատրաստվածությամբ օժտված չեն: Բայց սա նույնպես լուծվող խնդիր է, եթե գուցահեռ ներդրվեն ընդունելության հարցը բողոքարկելու ընթացակարգեր, հարկ է նկատել, որ բողոքարկման ենթակա չէ ոչ թե ընդունելության հարցը լուծելու վերաբերյալ որոշումը, այլ վճարեկ դատարանի վերջնական որոշումը:

Մենք հպանցիկ անդրադարձ կատարեցի «նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերին», սակայն, կարծում ենք, այս ինստիտուտը բննարկման առարկա հարցադրման տեսանկյունից էական նշանակություն ունի: Ներկայումս հատկապես դատական համակարգի ներկայացուցիչները հաճախ են խոսում նախադեպային իրավունքի ներդրման մասին: Ընդ որում, հարցը ներկայացվում է այնպես, որ կարծես սահմանադրական կամ օրենսդրական խոչընդոտներ չկան, պարզապես անհրաժեշտ է համապատասխան գործելաճ ներդնել:

Համոզված եմ, որ մեր իրավագիտակցությունը դեռևս հնարավորություն չի տալիս հստակ պատկերացում կազմել նախադեպային իրավունքի վերաբերյալ, իսկ համայնի վերլուծությունները ցույց են տալիս, որ այդ ինստիտուտը իր դասական իմաստով պարզապես չի կարող կիրառվել մեր իրավական համակարգում: Ավելին, այն բողոքված տեսքով մասնակի կիրառություն է ունեցել հենց խորհրդային իրավական համակարգում, թեպետ խորհրդային իրավունքի դոկտրինան պաշտոնապես չի ընդունել նախադեպային իրավունքը: Այսպես, խորհրդային իրավական համակարգի պարագայում Գերագույն դատարանի պլենումն օժտված է եղել պաշտոնական պարզաբանումներ տալու իրավասությամբ, որոնց դրույթները համապարտադիր են եղել ոչ միայն դատարանների, այլև մինչդատական վարույթ իրականացնող սուբյեկտների համար:

Ինչևէ, որպեսզի որևէ դատական ակտ համարվի նախադեպային, անհրաժեշտ է առնվազն հետևյալ նախապայմանների առկայությունը՝

- այդ ակտը պետք է կայացվի որևէ դատական ատյանի ակտի դեմ բերված բողոքը վերաքննության կամ վճարեկության կարգով քննելու արդյունքում,

- տվյալ դատական ակտում պետք է մեկնաբանված լինի այն օրենսդրական ակտը, որը կիրառվել է տվյալ գործով և դրվել է դատական ակտի հիմքում: Ընդ որում, մեկնաբանությունը պետք է բովանդակի լրացուցիչ իրավական դրույթներ,

- տվյալ դատական ակտում ներառված մեկնաբանությունները պետք է պարտադիր լինեն ոչ միայն դատարանների կամ մինչդատական վարույթ իրականացնող մարմինների համար, այլև ունենան համընդհանուր նշանակություն իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտի համար:

Իսկ հիմա փորձենք առաջադրել մի այսպիսի պարզունակ հարց. Հայաստանի Հանրապետությունում որևէ դատական ատյան օժտվա՞ծ է վերը նշված բնույթի լրագործություններով: Կարծում եմ՝ պատասխանը կլինի բացասական: Այդ իմաստով է, որ մենք վերևում նախապատվությունը տվեցինք ոչ թե «նախադեպային դատական ակտ», այլ «նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտ» արտահայտությանը:

Ինչպես արդեն նշեցինք, արդարադատության մատչելիության հիմնախնդիրը չափազանց տարրուճակ է, ուստի սույն ուսումնասիրության մեջ փորձ է արվել բարձրաճայնելու դրանց միայն մի մասը:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյան

# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2009

ՀՈՒՆԻՍ 2 (2)



**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՅՒԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ**

### ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ**

### ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քաղաքացիական և տնտեսական գործերով բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու



**ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ**

### ՀԵՂԻՆԵ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդակցան



**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՍԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒՐՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ**

**(ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)**

### ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ



**ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԵՐԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ Ազգային ժողովի նախագահի խորհրդակցան



**ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

### ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական և մոնիթինգի իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու



**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ  
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՍԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ**



**ՍԱՅԱԴ ԲԱԴԱԼՅԱՆ**

ԵՊՀ-ի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող

**СУДЕБНАЯ ВЛАСТЬ В ЕВРОПЕЙСКОМ СОЮЗЕ: СУД ЕС И  
НАЦИОНАЛЬНЫЕ СУДЫ**



**МИКАЕЛ МИНАСЯН**

Аспирант юридического факультета Российско-Армянского (Славянского) университета

**К ВОПРОСУ ОБ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА СОВЕРШЕНИЕ  
ПРЕСТУПЛЕНИЯ В СОСТОЯНИИ ОПЬЯНЕНИЯ**



**ՈՒՐԱ ՅՕԳՐԱԿՅԱՆ**

Преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**  
2009  
ՍԵՊՏԵՄԲԵՐ 2 (3)

**ԲԱՐՈՅԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՆՇՎԱԾ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՎԵԼ ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ**



**ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության հայցապահանջագրերի և գանձումների սպասարկման բաժնի առաջատար մասնագետ

**ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՁԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ**

**ՍԱՐԻԱՄ ՄՆԴՈՅԱՆ**

ՀՀ արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության առաջատար մասնագետ

**ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ**



**ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող

**КВАЛИФИКАЦИЯ УБИЙСТВА В СОСТОЯНИИ АФФЕКТА ПО ПРИЗНАКАМ СУБЪЕКТА**

**ЭЛЛАДА АЙРИЯН**

Сопкатель кафедры уголовного и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**ОБЪЕКТ ЛЕГАЛИЗАЦИИ (ОТМЫВАНИЯ) ДОХОДОВ, ПРИОБРЕТЕННЫХ ПРЕСТУПНЫМ ПУТЕМ**

**ЛИЛИТ АЗАТЯН**

Аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**ОТДЕЛЬНЫЕ ВОПРОСЫ НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ ПО СОВОКУПНОСТИ ПРИГОВОРОВ**

**АРТУР КЕЛЕШЯН**

Сопкатель кафедры уголовного и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**ИНСТИТУТ ОМБУДСМЕНА, КАК ВАЖНЫЙ МЕХАНИЗМ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА**

**КАРЕН КАРАПЕТЯН**

Сопкатель кафедры конституционного и муниципального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**ПРОБЛЕМЫ КВАЛИФИКАЦИИ И ДИФФЕРЕНЦИАЦИИ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ПО ПРИЗНАКАМ СПЕЦИАЛЬНОГО СУБЪЕКТА ПРЕСТУПЛЕНИЯ**

**НАИРА ЗОГРАБЯН**

Преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**УБИЙСТВО ЖЕНЩИНЫ, ЗАВЕДОМО ДЛЯ ВИНОВОГО НАХОДЯЩЕЙСЯ В СОСТОЯНИИ БЕРЕМЕННОСТИ (П. «Г» Ч. 2 СТАТЬИ 105 УК РФ)**

**ГЕВОРГ ГЕВОРГЯН**

Аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**РАЗГРАНИЧЕНИЕ СЛЕДСТВЕННЫХ И ПРОЦЕССУАЛЬНЫХ ДЕЙСТВИЙ, ПРОВОДИМЫХ ДО ВОЗБУЖДЕНИЯ УГОЛОВНОГО ДЕЛА, ПО УИК РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**ВЛАДИМИР ОГАНЕСЯН**

Магистрант кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета





ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2009

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2 (4)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳՈՒՄ**

**ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈՔՅԱՆ**

Գաժառի պետական համալսարանի ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր



**ՀՀ ԶՐԵԱԿԱՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ**

**ՔՐԻՍՏԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

«Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի և Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու



**ПРОБЛЕМЫ ПРИМЕНЕНИЯ ПРЕЮДИЦИОНАЛЬНОЙ ПРОЦЕДУРЫ В  
СУДЕБНОЙ СИСТЕМЕ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА**

**МИКЛАЕЛ МИНАСЯН**

Аспирант юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**НЕКОТОРЫЕ СПЕЦИФИЧЕСКИЕ АСПЕКТЫ ВОЗМОЖНЫХ  
НАРУШЕНИЙ ПРАВ ЛИЦ, ПОДЛЕЖАЩИХ ВЫДАЧЕ**

**АННА ШАХНАЗАРЯН**

Главный специалист управления по отношениям с европейским судом по правам человека Министерства Юстиции Республики Армения.

**ОБЩИЕ КРИТЕРИИ РАЗГРАНИЧЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ  
ПРОТИВ ЖИЗНИ ЧЕЛОВЕКА (АНАЛИЗ УК РФ И РА)**

**МАРИНА ГАСПАРЯН**

Сопредседатель кафедры уголовного права и уголовно процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



**ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ФОРМ МНОЖЕСТВЕННОСТИ  
ПРЕСТУПЛЕНИЙ  
(СРАВНИТЕЛЬНО-ПРАВОВОЙ АНАЛИЗ УК РФ И РА)**

**АРТУР КЕЛЕШЯՆ**

Сопредседатель кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета



*УБИЙСТВО ЛИЦА СОПРЯЖЕННОЕ С ПОХИЩЕНИЕМ ЧЕЛОВЕКА***ԴԵՎՈՐԳ ԴԵՎՈՐԳՅԱՆ**

Аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права юридического факультета Российско-Армянского (Славянского) университета

*ЗНАЧЕНИЕ ТАКТИЧЕСКИХ ПРИЕМОВ ПРИ ПРОИЗВОДСТВЕ СЛЕДСТВЕННЫХ ДЕЙСТВИЙ***ՏՄՐԵՆ ՎՕՏԿԱՆՅԱՆ**

Магистрант юридического факультета международного научно-учебного центра Национальной Академии Наук РА

*PROBLEMS ARISING DURING THE EXECUTION OF THE STATE'S OBLIGATION TO PROVIDE ARRESTEES AND DETAINEES WITH REQUISITE MEDICAL ASSISTANCE UNDER THE ARTICLE 3 OF THE EUROPEAN CONVENTION ON HUMAN RIGHTS***ԴԻԱՆԱ ԳՏՒԿԵՅԱՆ**

First class specialist of the Department for the Relations with the European Court of Human Rights of the Ministry of Justice. PhD student in International law at the National Academy of Sciences of the Republic of Armenia.

